ԱԼԻՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թիֆլիս	Գաւառներում	Արտասահման
Տարեկան 6 ր.	Տարեկան 7 ր.	Տարեկան 32 ֆր.
½ տարին 3 ր.	½ տարին 3 ր. 50 կ.	½ տարին 16 ֆր.
Ամսական 60 կ.	Ամսական 70 կ.	Ամսակ. 3 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վճարն է առաջին երեսում իւրաքանչիւր տողին 6 կոպէկ, իսկ վերջին երեսում 3 կոպէկ։

Մեծ և տևողական յայտարարութիւններ առանձին պայմանով։

Խմբագրութիւնը բաց է 10—3 ժ. և երեկոյեան 6—8 ժ., իսկ կիրակի և տօն օրերին ցերեկ. 12—2 ժ.։

Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Ֆրէյլինսկայա փող. № 6. Тифлисъ. Редакція „Аликъ", Фрейлинская, № 6. կամ Rédaction „Alik" Tiflis (Russie).

Հեռախօս № 90

№ 10 ԵՐԵՔՇԱԲԹԻ 9 ՄԱՅԻՍԻ 1906 Թ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

1906 Թ. ԵՐԵՔՇԱԲԹԻ 9 ՄԱՅԻՍԻ № 10

„ԱԼԻՔ"-ի առանձին համարն արժէ 3 կոպէկ.

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱԼԻՔ"

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

Մայիսի մէկից մինչև տարւայ վերջը— Թիֆլիսում—4 ր. Թիֆլիսից դուրս—4 ր. 75 կոպ. Արտասահման—22 ֆրանկ.

Դիմել՝ Тифлисъ редакція «Аликъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Alik».

Խմբագրատունը գտնւում է Թիֆլիսում, Ֆրէյլինսկայա փողոց № 6.

ԲԱՑՒԱԾ Է

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ

„ԱՇԽԱՏԱՆՔ"

Առաջարկում է ամեն տեսակ ծառաներ, պախճիներ, խոհարարներ, մշակներ, գանազան տեսակի բանւորներ և այլն։

Առաջարկում է նաև ինտելլիգէնտ աշխատաւորներ—գրագիր, հաշւապահ, կանտորշչիկ և այլն։

Բիւրօն բաց է առաւօտեան ժամի 9-ից մինչև 1-ը, երեկոյեան 5—7 ժամը։

Հասցէն՝ Пушкинскій Пассажъ № 17, վերին յարկ։

172 6—10

Քարածուխի պահեստ «ՆԱԽՃԻՐԱ»

Ա. Զ. ՄԱԴԱԹՕՎԻ ԵՒ Մ. Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Ծախում է 3 ի ս կ ա յ ի ընտիր տեսակի

Կ ԻՐ (ИЗВЕСТЬ)

մատչելի գներով։ Վագոնով առնողին զիջում։ Նոյն տեղում ծախւում է ՔԱՐԱԾՈՒԽ, ԱՆՏՐԱՑԻՏ, ԱԾՈՒԽ, ԿՐԱԿԻՑ ՉԸ ՀԱՆՈՂ ՑԵՄԵՆՏ և ամեն տեսակի ՓԱՅՏ։ Պահեստում գտնւում է վառարան շինող փորձւած վարպետ, վառարանները քարածուխին յարմարեցնելու համար։

Հասցէն՝ Արտասումանսկի փող., մաքսատան և տրամվայի պարկի դիմաց։

Հեռախօս № 1016 և 30։ 179. 25—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելեամինօվսկայա փողոց № 8։ 137 7—100

Նոր-Նախիջևանի Թատրոն

Տեղական Դրամատիկ ընկերութեան վարչութիւնը

պէտք է պահէ նկող սեզոնում

(1906—1907)

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ. ԽՈՒՄԲ

և հրաւիրում է ցանկացողներին (դերասան, ռեժիսոր, սցենարիուս, յուշարար) իրենց պայմաններով դիմել ընկերութեան նախագահին, պ. Գ. Չուբարին, այս հասցէով.

Нахичевань н/Дону, присяжному повѣренному Г. И. Чубарову, 21 л. с. д. № 8.

(89) 4—6

ԽԱՐԲԵՐԴ Ցուցէյնիկ գիւղէն Կարապետ Տէմիր-ճեանը, որ կը գտնւէր Շուշի կամ Գանձակ, թող հաճի հասցէն ինձ ղրկել Սուրակ, Շվինդիսովսկայա փող. տ. Իւզլիւա № 59 Հաճի Ցովհաննէս Բ. Աստուրեանս։

(180) 2—2

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւն 12—1 ժ. առ. և 5—6 ժ. երեկ.

Միխայլօվսկի պր. տ. Ճաւճանիձէի, 36.

122 10—47

Թիֆլիս, 8 մայիսի

ԴՈՒՄԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ ՉԷ

Այո, գիտենք, թէրեւ պարլամենտ է Պետական Դուման,—ասում են սահմանադիր ռամկավարները.—բայց որ ժողովուրդն է սկսել միանգամից կատարելագործւած պարլամէնտով։

Ո՛չ—ասում ենք մենք,—Պետական Դուման ամենևին պարլամենտ չէ։

Պարլամէնտ բառի հետ կապւած է պարլամենտարիզմը կամ պարլամէնտական վարչութեան սիստէմը։ Իսկ դա մեզանում դեռ չը կայ և ամենևին հաւանականութիւն չէ երևում, որ մօտ ապագայում, առանց ներքևից դէպի վեր ճնշումների՝ առանց յեղափոխական նոր ալիքի՝ նա գոյութիւն առնայ վերևի կամքով։

Պարլամէնտարիզմի ամենաէական նշանն է մինիստրների պատասխանատւութիւնը ժողովրդական ներկայացուցիչների առջև։

Երբ պարլամէնտի մեծամասնութիւնը վստահութեան քւէ չէ տալիս մինիստրութեան, ամբողջ կաբինէտի թէ քայլին,—մինիստրութիւնը կամ ամբողջ կաբինէտը պարտաւոր է հրաժարւել։

Սա պատասխանատւութեան սկզբունքն է, ի հարկէ, պարլամէնտական երկրներում ամբողջ մինիստրութիւնը պարտաւոր է հաշիւ տալ և պատասխանատւութեան ենթարկւել իր արած բոլոր գործերի համար պարլամէնտի և ոչ վեհապետի առջև։

Այդ սկզբունքն անպատճառ կապւած չէ ընտրողական քառանդամ սիստէմի հետ։ Այսպէս՝ Անգլիայում լիակատար պարլամէնտարիզմ է տիրում, չը նայելով, որ ընդհանուր ընտրողական սկզբունքը դեռ չէ ընդունւած, չը նայելով, որ մի փոքրիկ ցենզ դեռ գոյութիւն ունի։ Գերմանիայում, չը նայելով, որ կայ ընդհանուր ընտրողական իրաւունք, կատարեալ պարլամէնտարիզմ չը կայ։ Այնտեղ մինիստրներին նշանակում է վեհապետը. նրանք պատասխանատու են պետի առջև և ոչ րայխստագի։ Վերջինս կարող է մինիստրութեան նախագծերը չընդունել, բացէ ի բաց մերժել, անվստահութեան քւէ տալ, բայց մինիստրները դրանով չեն պարտաւորւում հրաժարւել. ամենածայրայեղ անյարմարութեան կամ խայտառակւելու դէպքում, կարող է հրաժարւել մինիստրներից մէկը միայն, ինչպէս մի քանի տարի առաջ այդ տեղի ունեցաւ մինիստր Միկէլի հետ՝ խոշոր կաշառակերների հարցի առիթով։

Պարլամէնտարիզմը, բառի իսկական մտքով պահանջում է կաբինէտի գոյութիւն։

Վեհապետը կամ հանրապետութեան նախագահը հրաւիրում է պարլամէնտի մեծամասնութիւնը կազմող կուսակցութեան լիդէրներից կամ գլխաւորներից մէկին—ամենից աւելի կուսակցութեան վստահութիւնը վայելողին, նոյն իսկ և յանձնում է նրան կազմել մինիստրների կաբինէտ։ Այդ գլխաւոր կամ առաջին մինիստրը կամ մինիստր-նախագահը հրաւիրում է միւս բոլոր մինիստրներին՝ ի հարկէ կըրկին մեծամասնութեան աւելի կամ պակաս վստահութեանն արժանացած անձերի։

Պարլամէնտական երկրներում կառավարութիւն կոչւածը հէնց այդ կաբինէտն է. պետը կամ վեհապետն այդ երկրներում չէ կառավարում։

Երբ մի անգամ արդէն կազմւեց կաբինէտը, նա վարում է երկրի բոլոր գործերը։

Կաբինէտն առհասարակ գործում է պարլամէնտում և երկրում իբր մի ամբողջութիւն. նրա ամեն մի անդամի արած քայլի համար պատասխանատու է ամբողջութիւնը և ոչ նրա այս կամ այն անդամը։

Ինչպէս վերևում էլ ասացինք, եթէ պարլամէնտի մեծամասնութիւնը որև է գործնական խոշոր խնդրում կամ սկզբունքային մի հարցում չընդունեց կաբինէտի առաջարկը, դա դիտւում է իբր անվստահութեան քւէ, և կաբինէտը հրաժարւում է։

Այն ժամանակ երկրի պետը հրաւիրում է պարլամէնտում նոր առաջացած այդ մեծամասնութեան վստահութիւնը վայելող մի անձի և նրան է յանձնում նոր մինիստրութիւն կազմելու հոգսը։

Օլիվէր Կրոմվէլի օրերից յետոյ Անգլիայում տիրել է զուտ պարլամէնտական վարչութիւն, և տօրիներն ու վիգերը փոխադարձաբար իրենց ձեռքն են առել երկրի կառավարութեան ղեկը, փոփոխակի յաջողութեամբ վարել են երկրի գործերը—թէ ներքին և թէ արտաքին։

Ֆրանսիայում 1872 թւից սկսած, Ш հանրապետութեան յաստատւելուց յետոյ, նոյնպէս պարլամէնտական վարչութիւն է սկսւած։

Արդեօք պարլամէնտի որև է նմանութիւն պէտք է կրէ Պետական Դուման. արդեօք մինիստրների կաբինէտ պէտք է խսկապէս եւրոպական իմաստով գոյութիւն առնի Ռուսաստանում. արդեօք Վեհապետը պէտք է ամբողջ երկրի ղեկը յանձնէ Դումայի մեծամասնութեան վստահութիւնը վայելող անձերի, թէ պէտք է նշանակէ մի Վիտտէ, մի Դուրնովօ, մի Գօրեմիկին. արդեօք պէտք է գոյութիւն ունենան առանձին մինիստրներ, թէ ամբողջ կաբինէտ—պատասխանատու ոչ թէ Վեհապետի, այլ Դումայի առջև։

Ահա մի շարք «արդեօք»ներ, մի շարք դեռ բաց մնացած, վճռելի հարցեր։ Առանց դրանց վերջնական և դրական լուծման, բացարձակ ազնւութիւն կը լինի պարլամենտ անւանել մեր երկրի Պետական Դումային։

Չը պէտք է մթնացնել աշխատաւոր ժողովրդի գիտակցութիւնը, չը պէտք է նրան չափազանցրած յոյսեր ներշնչել Դումայի առիթով։ Եւ, որ գլխաւորն է, չը պէտք է խաբել, թէ Պետական Դուման պարլամենտ է, այն ժամանակ, երբ նա գործիք է բիւրոկրատիայի ձեռքում խաբելու ժողովրդին, հանգստացնելու նրան, կասեցնելու նրան ազատութեան բուռն արտայայտութիւններից, յեղափոխական շարժումից։

Դուման պարլամէնտ չէ ժամանակակից մտքով. նա գործիք է հին ռէժիմի ձեռքին։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹԷ ԽԱՆՈՒԹԻՒՆ

II

Կատարեալ անընդունակութիւն, աններելի անհոգութիւն ցոյց աւեց Կովկասի վարչութիւնը և մեր կեանքի այլ կողմերի նկատմամբ։

Պարսից գերիշխանութեան ժամանակ մեր երկրի ամեն մի մաս անջատւած էր միւսից, վարում էր առանձնացած կեանք հասարակական աղէտների և բնութեան արհաւիրքների հասցրած նեղ օրերին, ամեն մի շրջան ոչ ինքն էր ձեռք մեկնում հարևանին, ոչ էլ ստանում օգնութիւն դրսից... Համաճարակից, սովերից, անբերրիութիւնից ազատւելու միակ միջոցը գաղթականութիւնն էր։

Երբ գատարկւում էին առատ տարիներին ցորենով լցւած հորերը, երբ վերջանում էր «առատաձեռն» ագաների ու «աստւածասէր» վանքերի պաշարները—ժողովուրդը սկսում էր կերակրւել բոյսերով, կատարւում էր հիւանդութիւնից, սովից, տուն տեղ թողած փախչում էր աւելի երջանիկ վայրեր։

Սովը, այն ժամանակներում Աստուծոյ պատիժ էր, բայց անխուսափելի, դաժան երևոյթ։ Ընդհանուր աղքատութեան շնորհիւ խաները անկարող էին ունենալ յատուկ պահեստներ ու դրամարկղներ երկար տարիներ սովի դիմանալու համար։ Առատ սովի ունենալու դէպքում իսկ երկրի կառավարիչները Փրզիբրամեա անկարող էին հպատակներին ուտելիք հայթայթել հեռաւոր առատ վայրերից՝ չը կար ապահովութիւն, չը կային յարաբերութեան միջոցներ, չը կային երկաթուղիներ։

Կովկասում հաստատւեցին նոր կարգեր։ Մի ամսւայ ճանապարհը շնորհիւ գիտութեան յաղթանակի դարձել է մի օրւայ ճանապարհ։ Լոնդոնից, Աւստրալիայից ցորենի Բաթում փոխադրելը աւելի արժան է նստում այսօր, քան Բաթումից նորեան Արդւին ուղարկելը։ Վերջապէս, ահա քանի երրորդ տասնեակ տարին է, որ հացի գինը քանի գնում այնքան աւելի արժանանում է, կեանքի պահպանութիւնը դարձել է անհամեմատ աւելի դիւրին։

Երևան, եթէ կայ հեռատեսութիւն, եթէ կայ դրամ, ոչ մի տեղ այսօր սովը չէ կարող գոյութիւն ունենալ։ Սակայն, դրամ այսօր մենք ունենք, բայց սովը շարունակում է հանդիսանալ նոյն մասշտաբի երևոյթը, որպիսին էր նա և մի դար առաջ։

Ընդհանուր, բացառիկ աղքատութիւնը որի կարիքներին բաւարարութիւն տալու համար մենք վճարում ենք յատուկ տուրք պետական մթերքի դրամարկղին (продов. капиталъ), վճռականապէս, յատուկ տուրքերի, երկաթուղիների յատկացած գոտիների միջոցաւ մենք տալիս ենք տասնեակ միլիոններ Ռուսաստանի կազմից խաչին։ Անդրկովկասեան արկղներում, պետական գանձարաններում, բանկերում ամեն օր դիզւած են հազարաւոր միլիոններ, որոնք կէս ամիս—սովորականից աւելի վճարով պատրաստ են փոխառութիւն հասցնել հարիւրաւոր միլիոններով։

Եւ չը նայած այդ ամենին, մեր կեանքի նեղ օրերին բնութեան թէ հասարակական դէպքերի օրհասական ժամերին այսօր մենք մնում ենք անօգնական ու մեն մենակ, նոյն կիսավայրենի խանական պայմաններում, որի մէջ հեծում էին և մեր նախնիքները հարիւր տարի առաջ։

Շատ հեռուն չը գնանք։ 1891-ին Ռուսաստանի մի խոշոր մասը, 20 միլ. բնակիչներով ենթակայ էր անբերրիութեան, համարեա սովի։ Կենտրոնական վարչութիւնը այդ ժամանակ պատանց հարկերից տասնապետներին, իբր հաշւով աշխատանքի ուղարկեց ցանկացողներին, իշխեցից դէպի վնասւած վայրերը մեկնող հացահատիկների ճանապարհածախսը, կազմակերպեց մի շարք հասարակական աշխատանքներ, յատկացնելով վնասւած վայրերին յիսուն միլիոնից աւելի։ Օգնութեան եկան և մասնաւոր անձինք, ընկերութիւններ, զեմստվօները։ Երաշտի ենթակայ վայրի ստացած նպաստը հասաւ միջին թւով 5 ր. անձի և մօտ 30 ր. ընտանիքի։ Մեծ բան չէր այդ 30 ռուբլին բայց... քանի քանի ընտանիքներ պահեցին այդ 30 ռուբլու շնորհիւ իրենց տնտեսութիւնը, քանի քանի միլիոն աշխատաւորներ պահպանեցին առողջութիւնները, քանի տասնեակ հազար երեխաներ ու թոյլեր ազատւեցին մահւան ճանկից։

Շատ ժամանակ չանցած, ճիշտ 1893-ին երաշտ էր Կովկասի մի քանի վայրերում, սով, իսկական սով էր Երևանեան նահանգում։ Տեղական վարչութիւնը չէր տեսնում սովը։

Լրագրական լուրերը նահանգապետ Ֆրեզէն համարում էր չար և նենգ ամբաստանութիւններ։

Բժշկական վկայականները սովից մեռնողների մասին պահւում էին իբրև պետական խորհրդաւոր գաղտնիքներ։

Ծախում էին հողագործի եզներն ու ձիերը, խաշնարածները կէս գնով զրկւում էին կթանից, ոչխարից, չքաւորները քանդում էին տները, շուկայ հանում տան գերանները։ Գիւղացիք հազարներով վերցնում էին պանդխտութեան ցուպը և դիմում գաղթականութեան։ Երկրի կառավարիչները չէին նկատում այս ամենը և վերջը եկաւ իրենց պարտքը կատարած ու խիղճը հանգստացրած լինելու համար նպաստ հասցրին սովեալներին, այն էլ փոխարինաբար և... միջին հաշւով 25 կ. անձի վրայ...

Չենք կարծում, չենք կարող կարծել, որ խաները հարիւր տարի առաջ ընդունակ լինէին այսպիսի «պարտաճանաչութեան», այսպիսի «անկողմնապահութեան»։

Բայց գուցէ դա հետևանք էր տեղացի փոքր պաշտօնեաների քմահաճոյքի, գուցէ սա կարող էր տեղի ունենալ միմիայն շնորհիւ համայն Ռուսաստանի վրայ ծանրացող կոչմարի։

Ոչ, դժբախտաբար, ոչ. նոյն բանը կրկնւում է և այս տարի, ռուսաց գիտակցութեան համայն խղճի արթնացման, յեղափոխութեան այս մեծ տարին։

Ռուսաստանի համարեա նոյն նահանգներում երաշտ, հացի պակասութիւն, սով է և այս տարի։ Սով է իր սովորական հետևանքներով, իր հրամայողական պահանջներով։ Եւ Պետերբուրգի վարչութիւնը կատարում է իր պարտականութիւնները, ցրում է սերմացու և ուտելիք, ծախսել է 60 միլ. և շարունակելու է աւելին ծախսել։ Ոչ Շատօնեան պատերազմի կլանած 2000 միլիոնը, ոչ երկրի ներքին տագնապալից վիճակը, ոչ միլիարդներով ստացւող նոր ծախսերը չեն կանգնեցնում վարչութեան սովեալներին օգնելու գործից, չեն կարող կանգնեցնել, քանի որ սովածներին հաց կակաւելը, մեռնողներին մահի ճանկից ազատելը, տէրութեան ամենատարրական և ամենաանյետաձգելի պարտականութիւնն է։

Այո, դա տէրութեան պարտականութիւնն է, տէրութեան, եթէ վերջինս կանգնած է իր կոչման բարձրութեան վրայ։ Սակայն, կարող ենք մենք դա սոսկ Կովկասի նկատմամբ։ Գիտակցւում են արդեօք մեր երկրի կառավարիչները իրենց դերն ու պարտականութիւնները։ Սով է Ռուսաստանում, սով է և մեր երկրում, սով է առաջ եկած ոչ երաշտից, ոչ մորեխից, այլ ամբոխի և կոտորածի ընդհարումներից, ներքին քաղաքացիական կռւից. յամենայն դէպս Կովկասի շատ տեղերում սով է. այսօր հազարաւոր ընտանիքներ և Նախիջևան, և Արէշ, և Գանձակ, և Զանգեզուր, և Շաշեն չունեն ոչ տուն ու տեղ, ոչ եզ ու գութան, ոչ սերմ, ոչ ուտելիք։ Այրւել, կողոպտւել, մորթւել, տուժել են բոլոր ազգութիւններից՝ հայերից, և թուրքերից և վրացիներից։ Կովկասը կրել է սարսափելի տնտեսական հարւածներ։ Երկրի հարստութիւնն ընկել է շատ զգալի չափերով։ Միմիայն աշխատաւոր գիւղացիք ունեցել են 7—10 միլիոն վնաս։

Ամեն տեղ ցանքերը պակասած են խոշոր չափով, երկրին սպառնում է վտանգ մօտ ապագայում։

Շատ վայրերում սովը սկսւած է վաղուց ի վեր, օրէցօր նա առանում է աւելի և աւելի վտանգաւոր բնոյթ։ Սովից, հիւանդութիւններից մարդիկ սկսել են կոտորւել։ Միայն Նախիջևանի ... գիւղում, մի գիշերում գերեզման են իջեցնում, չը տեսնւած թւով երեխայոց դիակներ։ Վարանդայի ... գիւղում հիւանդութիւններից, գաղթականութիւնից ապրանքաւորութեան թիւը իջել է 40%-ով...

Եւ այսպէս շատ և շատ տեղերում։

Մեր երկրի կառավարիչները տեսնում են այս ամենը և լռում, մնում ձեռնպահ, ինչպէս լուռ և ձեռնպահ էին մեր երկրի խաներն ու բէգերը հարիւր տարի առաջ։

Բայց... այն ինչ ներելի էր օտքին, բանւորին պարսիկ բէգերին, ներելի չէ մեր «կրթուած», մաքուր հագնուած, «եւրոպացի» պաշտօնեաներին։ Այն, ինչ անկարելի էր յուսալ խաների դատարկ գանձարաններից, բանկերից, պահեստներից զուրկ պարսկաց իշխանութիւնից, խրատելի է պահանջել միլլիարդների բիւջէ ունեցող հզօր պետութիւնից։

Այն, ինչ որ բնական, անխուսափելի Աստծու պատիժ էր հարիւր տարի առաջ, այսօր համարւում է դատապարտելի, ամօթալի, հետևանք կառավարիչների անձեռնհասութեան, նրանց անպարկեշտութեան։

Հերիք է, վերջապէս։ Մենք իրաւունք ունենք սպասելու, որպէսզի մեր երկրի մեծ ու փոքր վարիչները լինեն գիտակից, արդար և անաչառ հսկողներ իրենց յանձնուած ազգաբնակութեան վրայ։

Մենք իրաւունք ունենք պահանջելու, որպէսզի թէ պաշտօնեաները Կովկասում, թէ վարչական ամբողջ սիստեմը մեր երկրում դրուած լինի կատարեալ հաւասարութեան և իսկական արդարութեան հողի վրայ։

Այլ կերպ սա կը լինի խանութիւն և ոչ կառավարութիւն։ Խանութիւն, որ պէտք է կործանել օր առաջ, խանութիւն, որի տեղ պէտք է հաստատել իսկական վարչութիւն։ Վարչութիւն—ընտրուած համայն ժողովրդի կողմից, վարչութիւն կառավարող ժողովրդի ընտրեալների միջոցով. վարչութիւն հաստատուած ժողովրդի արդարացի կարիքներին գոհացում տալու համար։

ՃԱՌԵՐ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պետական Դումա—ահա այն կենտրոնակէտը, որ ներկայումս իր շուրջն է քաշում ազգաբնակութեան հետաքրքրութիւնը Ռուսաստանի բոլոր ծայրերից։

Երկար ու ձիգ ամիսների ընթացքում արիւն ու աւերածութեան մէջ խեղդուած ժողովուրդը անհամբեր սպասում է, թէ այդքան վէճերի ու քննադատութիւնների առարկայ դարձած այդ նոր հիմնարկութիւնը գէթ փոքրիկ չափով թեթևութիւն է բերելու բանակալութեան ծանր լծի տակ հեծող հայրենիքին, գէթ տարրական իրաւակարգ ու արդարութիւն է հաստատելու իշխող կամայականութեան ու բարբարոսութեան փոխարէն։

Բայց օրերն անցնում են միմիանց յետևից, գեղեցիկ ու կրակոտ ճառերը հնչում են Տաւրիկեան պալատում, Պետական Դուման անընդհատ շարունակում է իր նիստերը և յայտնում գոյներով ժողովրդի ցաւերն ու պահանջները պատկերացնում, իսկ կեանքում չը կայ դեռ իրական ոչ մի փոփոխութիւն։ Նոյն բռնութիւններն ու սարսափները, նոյն զինուորական դրութիւնն ու կամայականութիւնը շարունակւում է ամեն տեղ, իսկ բիւրօկրատիան գլխական ժպիտը երեսին կարծես դիտում է Տաւրիկեան պալատի ենթաւղիսաս ճառախօսներին և լռելեայն հասկացնում,—արտասանեցէք գեղեցիկ ճառեր որքան ուզում էք, ոգևորուեցէք որքան դեռ ժամանակ ունէք, իսկ մենք մեր անելիքը գիտենք...

Եւ իսկապէս. նրանք անշեղ կերպով շարունակում են այդ «անելիքը»։

Թէև Հոկտեմբերեան մանիֆէստով հաստատուած է, որ այսուհետև բոլոր նոր օրէնքները պէտք է ենթարկուեն Պետական Դումայի քննութեանը, բայց և այնպէս իշխանութիւնը Դումային բացելուց յետոյ էլ, առանց նրա կամքն ու ցանկութիւնը հարցնելու, առանց նոյն իսկ տեղեկութիւն տալու հրատարակել է նոր օրէնք գիւղական անտառական բանւորների գործադուլների մասին։

Թէև «բարձրագոյն խօսքով» անձի անձեռնմխելիութիւն է յայտարարուած, բայց և այնպէս ոստիկանութիւնը ամեն կերպ արհամարհելով այդ խօսքը, շարունակում է իր քաջագործութիւնները ոչ միայն հասարակ մահկանացուների, այլ և Դումայի անդամների վերաբերմամբ։

—Ապրիլի 29 ին պրիստաւի հրամանով միտինգից նօտայկաներով հեռացրել են Դումայի պատգամաւոր Սեդելնիկովին)։

Թէև ժողովրդի ներկայացուցիչները պահանջում են ընդհանուր ամնիստիա և զինւորական դրութեան ու խստութիւնների, սահմանակ անարդարութիւնների վերացում, բայց և այնպէս բիւրօկրատիայի ներկայացուցիչներն ամեն տեղ շարունակում են նախկին քաջագործութիւնները՝ անզուսպ հալածանքներն ու արտակարգ միջոցները՝ առանց մի որև է տրամադրութիւն ու նշան ցոյց տալու, թէ այդ բոլորին վերջ կարող է լինել։

Իսկ Վիտտէն—հրէշաւոր բարբարոսութիւնների ու արեան քաղաքականութեան այդ ճարպիկ ղեկավարը Պետական խորհրդում բացարձակապէս պաշտպանում է այն միտքը, թէ ընդհանուր ամնիստիա տալ կը նշանակէ բանտերից ազատել բոլոր յեղափոխականներին և նոր յեղափոխութիւն առաջ բերել, որ դէմ է պետական շահերին։

Նրա կարծիքով հարկաւոր է ամնիստիայի արժանացնել «միայն այն մոլորեալներին, որոնք ոճիրը կատարել են ջահելութեան, խաբուեցութեան և մտաւոր անբաւարար զարգացման շնորհիւ... որոնք իրենց յանցանքի համապատասխան չափից աւելի են տուժել»։

Այսինքն Վիտտէի կարծիքով հարկաւոր է ամնիստիայի քօղի տակ մի նոր խաբէութիւն կատարել, բանտերից ազատելով միայն մի քանի անմեղների։

Իսկ նրանք, որոնք համոզմունքի ու վեհ գաղափարների դրդմամբ իրենց ամբողջ կեանքն են նուիրել ազատութեան գործին, որոնք իրենց անձնազոհութեամբ ու հերոսութեամբ զարկ են տուել յեղափոխական շարժմանը և պաշտպանել ժողովրդի իսկական շահերը,—դրանք բոլորը, բոլորը նորից մնալու են մութ ու մայլ խորշերում, մաշւեն աքսորավայրերում, որպէս զի նոր յեղափոխութիւն, նոր «անկարգութիւն» տեղի չունենայ։

Ահա այդպէս է Վիտտէի կարծիքը, որին կողմնակից է Պետական խորհուրդը։ Անշուշտ այդպէս կը լինի և «բարձունքի» տրամադրութիւնը։

Ուրեմն եթէ նոյն իսկ սկզբունքով ընդունուի ամնիստիան, այնուամենայնիւ իրականութեան մէջ նա կը լինի մի ծաղրանկար այդ բառի իսկական իմաստի, մի նոր խաբէութեան, որի նմաններն այնքան մեծ թւով խրագործում էին մանաւանդ Վիտտէ-Դուրնովեան «առաջադիմական» զոյգի ժամանակ։

Իսկ եթէ մի այդպիսի տարրական պահանջ այդ գոյնի հեռանկար է պատկերացնում, հապա ինչ պիտի լինի Դումայի միւս պահանջները—(զինւորական դրութեան վերացումը, գիւղացիական ու բանւորական հարցերը, քաղաքական ձայնատւութիւնը և այլն և այլն), որոնք իրենց էութեամբ ու նշանակութեամբ անհամեմատ բարդ են ու բարձր ամնիստիայի հարցից։

Երևի դրանք էլ պիտի մնան իբրև մեռած տառեր թղթի վրայ, իբրև գեղեցիկ հնչիւններ Տաւրիկեան պալատում։

Թող ուրեմն այդպիսի հանգամանքներից յետոյ միամիտները ոգևորուեն ու յոյսեր տածեն դէպի Պետական Դուման որքան ուզում են, թող նրանք մեծ-մեծ բառերը նոյն իսկ հրաշքներ սպասեն այդ կիսատ-պատ ու մեռած հիմնարկութեան մէջ արտասանուող ճառերից։

Բայց իսկական գործիչները, բուն ժողովրդի շահերին նուիրուած խելահաս տարրերը պիտի մի անգամ ևս գիտակցեն, որ Դուման իր փրքուն ու մեռելութեան դատապարտուած ճառերով երբէք կարողանալու չէ թեթևութիւն տալ երկրի ծով ցաւերին, որ ժողովրդի համերաշխ ջանքերը, համառուն գործունէութիւնը և ըմբոստացած ոգին միայն կարող են լայն բաց անել ազատութեան իսկական ուղին, սանձահարել անզուսպ բիւրօկրատիային և հաստատել կարգ, խաղաղութիւն ու արդարութիւն։

Այդ է ցոյց տալիս անցեալի արիւնոտ պատմութիւնը, այդ է թելադրում նաև ներկայ իրականութիւնը։

Ն. Թ.

ԾԽԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցի։ Անցեալ կիրակի ինժ. Գրիգորեան և Տէր Գրիգոր Շահնազարեանի ապօրինի ընտրութեան դէմ տրուած 38 հոգու ստորագրութեամբ բողոքը յարգւեց թեմական առաջնորդի կողմից և մայիսի 7-ին նշանակուած էր կրկին ընտրութիւն։ Այս անգամ ծխականներն աւելի թւով էին եկել. ներկայ էին 62 հոգի։ Թեկնածուները կէսից պակաս ձայներ ստացան, ուստի և ոչ ոք ընտրուած չը համարւեց։

Հետևեալ կիրակին նոր ընտրութիւն է նշանակուած տաւփերով։ Ժողովի վերջում մի քանի խնդրագրեր ներկայացրին նոյն եկեղեցու երեցփոխ ինժ. Գրիգորեանի վարմունքների դէմ։ Բողոքների մէջ ուշադրութեան արժանի էր նաև այդ եկեղեցու բարերար Միրզոյեանի ժառանգի բողոքը, որը յայտնում է թէ իր պապը 30 հազար փող է ծախսել եկեղեցու շինութիւնների և դպրոցի վրայ և այսօր նրա անունը արհամարհւում է և դպրոցի վրայ կպած է «բարերար Գրիգորեանի» անունը։ Այս և սրա նման մի շարք բողոքներ յիշելով երեցփոխ—պ. Գրիգորեանի դէմ, որը եթէ չենք սխալւում 10-րդ տարին է նոյն եկեղեցու երեցփոխ է, ներկայ եղողներին մի տեսակ հանելուկի մէջ է գցում, թէ ինչո՞ւ գաղտնիք է թաղնուած այդ բոլորի տակ։ Ժողովը ցանկացաւ այդ խնդիրներով զբաղել հետևեալ ծխական ժողովում։

Քամոյենց եկեղեցի։ Այստեղի ընտրութիւնը ևս բեկանուած լինելու պատճառով թեմակալ առաջնորդի կողմից, այս մայիսի 7-ին նշանակուած կրկնակի ծխական ժողովում՝ միաձայն, առանց քուէարկութեան ծխական ժողովը հաստատեց նախկին ընտրուած թեկնածուներին։

Վերայի ս. Յուսի եկեղեցին։ Ընտրութեան ժամանակ աչքի ընկաւ մի շատ տգեղ վարմունք։ Մի քանի անձինք, (ինչպէս երևում է տիրացուն և ընկ.), չը գիտեմ ինչ նպատակով շահախնդրուած, առաջուց պատրաստած ֆոնդ էին արել ծխականներից մի մասի մէջ և մօտ քանի հոգու ստորագրութեամբ մի աղերսանք գրել պ. Սպանդար Սպանդարեանին, խնդրելով նրա համաձայնութիւնը իրեն թեկնածու գնելու համար։ Վերջինս մի նամակով յայտնում է, որ ինքը թէև աքսորուած և տանջուած, (չը գիտեմ ինչ նպատակով էր յիշում պարոնը իր տանջանքների մասին), զիջում է ծխականներին թախանձանքներին և համաձայնութիւն տալիս իր թեկնածութիւնը գնելու (Այդ նամակը կարդացին ծխական ժողովի ներկայութեամբ)։

Ահա այդ ժամանակ երիտասարդներից մի քանիսը խօսեցին ընտրութիւնների նշանակութեան մասին և բացատրեցին ժողովրդին պ. Սպանդարեանի և նրա նմանների անհամապատասխան լինելն այդ ընտրութիւնների համար։ Եւ երբ դրանից յետոյ ժողովրդին հարցրին, թէ ով չէ ուզում պ. Սպանդարեանի թեկնածութեան գնելը, բոլորը համարեա բացասական պատասխան տուին, և հետաքրքիր էր տեսնել, թէ ինչպէս խղճուկ տիրացուն փրկալած բացականչում էր, թէ սա ինչ խայտառակութիւն է, որ նոյն իսկ ստորագրողներն էլ չեն ուզում։ Պ. Սպանդարեանն ստացաւ ընդամենը երկու ձայն և այդպիսով այս անգամ ևս չիրականացաւ կղերականների երազանքը և նրանց ամբողջ ծրագիրը ու աշխատանքը ջուրն ընկաւ։

Թող մի անգամ ընդմիշտ հասկանան այդ պարոնները, որ ժողովուրդը հասունանում է, սկսել է գիտակցել իր չարն ու բարին և նրա հետ անհնարին է առաջւայ խաղերը խաղալ։ Ջուրը պղտորել է, և նրանք այլ ևս չեն կարող նրա մէջ ձուկ որսալ։

ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Բագու։ Բագւայ ընտրութիւնների մասին հաղորդել էինք, որ գաւառական ընտրութիւններին մեծ մասամբ մասնակցում էին Թուրքեր. 1341 հոգուց ներկայացան 531 մարդ։ Ջահերի մեծամասնութեամբ ընտրուած են Իբրահիմով Խամյել 207 ձայնով, Գուլման—205. Ռուստամբէգով Բախշի բէգ—204.

Գուլմանի թեկնածութիւնը դրել էին կադէտները, իսկ միւս երկու թեկնածուները թէև պաշտօնապէս ոչ մի կուսակցութեան չեն պատկանում, բայց իրենց քաղաքական հայացքներով և համոզումներով աւելի հակւած են կադէտների կողմը։

Մի արկղի վրայ փոխանակ թեկնածուների անունների գրուած է եղել. «ամբողջ կայսրութեան մէջ հողերի համայնացում, օրական 8 ժամեայ աշխատանք. հասարակական դատաստանի ենթարկել անմիջապէս բոլոր այն պաշտօնական մարդկանց, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակից են եղել արիւնահեղ ընդհարումների, աւերումների, ալան-թալանի գործին. ազատութեան համար մարտնչողներին (նրանք յանցաւորներ չեն) լիակատար և անմիջական ներումն. դասերի, տիտղոսների, պաշտօնական համազգեստների ոչնչացումն և ընդհանրապէս երկու սեռի իրաւունքների հաւասարեցումն. ընդհանուր հաւասար, գաղտնի և ուղղակի ընտրողական իրաւունք, անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն. խղճի, խօսքի, մամուլի և ժողովների ազատութիւն. ճշմարտութիւն և արդարութիւն»։

Բաթում։ Սոց. ֆեդերալիստները դիմում են արել սոց.-դեմօկրատներին ընտրութիւնների ժամանակ բլօկ կազմելու համար։ Սոց. դեմ. դեռ չեն պատասխանել. մերժման դէպքում սոց. ֆեդերալիստները մտադրութիւն ունեն համաձայնութեան գալու տեղական կադէտների հետ։

Գօրի։ Նահանգական ընտրութեան համար մայիսի 5-ին նշանակուած էր ընտրութիւնը։ Ժողովին մասնակցում էին 300-ից աւել սոց. դեմօկրատ ընտրողներ։ Ջահերի մեծամասնութեամբ ընտրուած են Մօսկւայի ուսանող Դ. Միխէլաշվիլին և Վ. Խախանովը։

Իսկ Գիւղացիների կողմից ընտրուած են 3 հոգի Ա. Խատիսկաձէ. Ի. Շակուլաշվիլի և Թ. Խարեբով։

Սղնախ։ Սղնախի շրջանի գիւղացիների կողմից ընտրուած են 3 ձախակողմեաններ։

Թիֆլիսում։ Մայիսի 7-ին, Բօտանիքական փողոցում գտնուող մահմեդական մզկիթում կայացաւ մահմեդականների ժողով՝ խորհրդակցելու համար, թէ եղած կուսակցութիւններից որին ձայնակցել կամ ձայն տալ։ Ներկայ եղող մի թուրք սոցիալ-դեմօկրատ ճառախօսեց, բացատրեց իրենց ծրագիրը և հրաւիրեց ձայն տալ իրենց կուսակցութեանը։ Հոգևորականները և մեծամեծները, վիրաւորուած այդ ճառից, թողին ժողովը և հեռացան։ Նրանց հեռանալուց յետոյ՝ մնացողների մէջ ծագեցին վէճեր. իրար մեղադրում ու յանդիմանում էին։ Այդ պատճառով ժողովը ոչ մի եզրակացութեան չը հասաւ և ցրւեց։

Մայիսի 5-ից քաղաքային ուպրաւան խիստ զբաղուած է ազդագրեր և ընտրողական թերթիկներ ցրւելով։ Աշխատողների թիւը շատացրած է և 6 անգամ փոփոխելով, ամբողջ օր ու գիշեր աշխատում են։

Քաղաքագլուխը նշանակել է հետևեալ անձերի նախագահ քաղաքամասերի ընտրողական շրջանների. I քաղաքամաս—Ի. Ն. Պլամենեվսկի, II-ում՝ Գամկրելիձէ, III-ում—Գոտուա IV-ում՝ Բախմեթիևը, V-ում՝ Մ. Օ. Պրուղենբերգ, VI-ում՝ Ռահիմ Բէգ Ախունդով, VII-ում՝ Մ. Զ. Միրզոեվ, VIII-ում՝ Արշակ Բաբով, IX-ում՝ Վ. Ա. Սուլխանով և X-ում՝ Մ. Վ. Լուննեվիչ։

Պետական Դումայի ընտրութիւնների համար գիւանը, համաձայն Կովկասի Փոխարքայի սկզբունքային որոշման, հնարաւոր ճանաչեց ընտրողական տոմսերն ուղարկել ոչ միայն ռուսերէն, այլ և տեղական լեզուներով։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱԽՏԵՐԻՑ

II

Ապարդիւն և ձանձրալի կը լինէր ընկնել օրինակների յետևից, այսքանն էլ բաւական է համոզւելու համար, որ ճեմարանում տիրում է ամենաուժեղ բիւրօկրատական կարգեր, նման ռուս միապետական բիւրօկրատիայի։ Բայց ինչպէս միապետական բիւրօկրատիան իր անկման նախօրեկին աւելի գազանացել է, և, զգալով իր գերիշխանութեան վերջը, ուզում է ամբողջովին իր էութեամբ արտայայտել պատմութեան առաջ—այնպէս էլ մեր կղերը, կորցնելով իր վաղեմի հեղինակութիւնը, ոյժը և զգալով որ ազատագրական շարժման մէջ ինքը ժողովրդի համար մի աւելորդ բեռ է, որ վաղ կամ ուշ պիտի մի կողմ ձգւի, աշխատում է ամեն կերպ երկարացնել իր օրերը, ամրացնել իր ազդեցութիւնը, բայց հակառակ է դուրս գալիս։

Այդպիսի սխրագործութեան օրինակ կարող է ծառայել վերջին ժամանակ աշակերտ Տէր-Մինասեան Սիմէօնի գործը։

Խօսքս վերաբերում է այդ աշակերտի նամակը ձերբակալելու գործին։ Ինչպէս յայտնել էին, նամակը իբր թէ վերադարձրել էին պօստի գրասենեակից կնքադրոշմը բաւական չը լինելու պատճառով և տեսուչը նամակի տիրոջը գտնելու համար «ստիպուած» էր եղել... բանալու և ստորագրութիւնը կարդալու.... Յանկարծ, ակամայից խեղճ տեսուչը նկատել էր, որ ստորագրութիւնը նոյն՝ մարդունն է, որ «Ընկերի» մէջ պարսաւել էր հոգևորականներին։ Այսպիսով հայր տեսուչը ամրապնդելով այն կարծիքի մէջ, որ գաղտնիքը միշտ Աստուծոյ կամօք պիտի բացւի, վերագրել էր այդ անակընկալ դէպքը Ամենաբարձրեալին, որ իհարկէ պօստային գաղտնիքը բանալու դէպքում էլ, պատասխանատուութեան չէ կարող ենթարկել։

Այսպէս «ակամայից» բացուած նամակը «ակամայից» ամբողջ մի շաբաթ մնում է ուսուցչական խորհրդի տրամադրութեան տակ և բոլորն էլ կարդում են անիծելով այդ դժբաղդ դէպքը, որ իրենց մեղքի մէջ է ձգում։ Իսկապէս, մեղքը դարձեալ անհոգ աշակերտինն է, եթէ կնքադրոշմը լրիւ լինէր, սուրբ հայրը չէր գայթակղւի սատանայից, չէր բանայ նամակը...

Եթէ Ռուսաստանը ազատութեան և ոչ ուժի, բռնութեան երկիր լինէր, սուրբ հայրը պիտի զգար իր կատարած քրէական յանցանքի ամբողջ պատասխանատուութիւնը, բայց բարեբաղդաբար (տեսուչի համար) Ռուսաստանի պայմանները միանգամայն համապատասխանում են նրա հոգեկան աշխարհին և նա կարող է անհոգ լինել, որ բացի հասարակական դատաստանից (ինչ արժէք ունի անհաւատների դատաստանը) ոչ ոք նրան անհանգիստ չի անի...

Տեսչի պատճառաբանութիւններից բուրում է անսահման ցինիզմ. իսկապէս, առաջինը պօստային վարչութիւնը նման դէպքերում երբէք չէ վերադարձնում նամակը, այլ ըստ օրէնքի կրկնակին է առնում ստացողից, երկրորդ՝ նոյն վարչութիւնը չէր կարող իմանալ թէ ում պէտք է վերադարձնել, և վերջապէս որ ամենագլխաւորն է, կարիք չկար բանալ և նամակը կարդալ տիրոջը գտնելու համար։

Ես հետաքրքրւեցի և իմացայ, որ այդպիսի դէպքերում, նամակի տիրոջը յանձնելու համար սեղանատանը յայտարարում են և խնդիրը վերջանում է...

Ուրեմն կարելի էր այս դէպքում էլ նոյնպէս վարւել, եթէ ուրիշ դիտաւորութիւններ չը լինէին։ Այս տգեղ վարմունքը ունենում է իր աւելի տգեղ հետևանքները. նամակի ստորագրութիւնը նոյնն է, ինչ որ «Ընկերի» մէջ գրած յօդւածի ստորագրութիւնը («Վաչէ») աշակերտը յայտնում է թէ ինքը չէ «Ընկերում» գրողը, որ դա միայն զուգադիպութիւն է, բայց ով կհաւատայ, չէ կարող ենթադրել ուրիշի կողմից անկեղծութիւն, գործը «քննւում է» և աշակերտը արտաքսւում։

Աշակերտները բողոքում են, որոշում են

ԹԵՐԹՕՆ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՒ*)

IV

Մեծ գաղափարներն իրենց ն աճողական պրօցէսի մէջ՝ անցնում են տարբեր աստիճաններ։ Նախ քան տիրելը մարդկանց խելքին, բանականութեան՝ նրանք տիրում են զգացմունքներին, երևակայութեան։ Նախ քան ձուլւելը կուռ, տրամաբանական սիստէմների մէջ՝ նրանք քարոզւում են սիրուն, հոյակապ ուտոպիաների, երազների ձևով։

Այդպէս՝ և սոցիալիզմի գաղափարը։ Տասնեակ դարերի ընթացքում նա մի սուրբ իդէալ էր, մի վարդագոյն ու երազական հեռապատկեր և ուրիշ ոչինչ. Պլատոն, Թօմաս Մօր, Կամպանելլա, Մօրելլի, Մաբլի—բոլորն էլ խանդավառ հաւատով նկարագրում էին այդ մշուշապատ իդէալը, որի հրապոյրներով և աշխատում էին ցնցել ու գերել մասսաների երևակայութիւնը, ինչպէս Մահմէդը՝ իր չնաշխարհիկ դրախտով։

Այդ զգայապաշտ, անտրամաբանական ոգին շնչում է մասամբ նաև 19-րդ դարու սկզբներում, նորագոյն սոցիալիզմի հռչակաւոր նախակարապետների—Սէն-Սիմօնի, Ֆուրիէի, Օվէնի—սիստէմներում։ Մարդասիրութեան հզօր շունչով տոգորուած՝ նրանք ցաւով, կսկիծով էին դիտում ժամանակակից թշուառութիւնը և քարոզում էին՝ կերպարանափոխել հասարակական կարգ ու կանոնը ի նպաստ աշխատաւոր ընդհանրութեան, չքաւոր ու իրաւազուրկ դասակարգերի։ Եւ թւում էր նրանց, թէ այդ քարոզը ինքնին բաւական է՝ մարդկանց, իշխողներին գրաւելու համար, սոցիալական անիրաւութիւնները բառնալու համար։ Նրանք ուտոպիստներ, երազողներ էին։

Արժէ, այնուամենայնիւ, փոքր ինչ կանգ առնել այդ հետաքրքրական դէմքերի վրայ, որոնց մօտ գտնում ենք ժամանակակից սոցիալիզմի գրեթէ բոլոր սաղմերը, բոլոր հիմնական պօստուլատները։ Ինքը Էնգելսը գտնում է «հանճարեղ մտքերի սաղմեր, ցիր ու ցան այդ մեծ ուտօպիստների թէօրիաներում»։

«Բոլոր մարդիկ պիտի աշխատեն»,—ահա մէկը այդ սոցիալիստական պօստուլատներից, որ Սէն-Սիմօնը հռչակեց դեռ 19-րդ դարի սկզբներում, իր Ժընևեան նամակների մէջ։ Աշխատանքը նրա աչքում հանդիսանում էր սեփականութեան միակ պայմանը։ Եւ համաձայն այդ սկզբունքի նա առաջարկում էր յեղաշրջել սեփականութեան ամբողջ սիստէմը, հասարակական բոլոր կարգերը... Ոսկէ դարը պիտի իրականանայ—ասում է հանճարեղ ուտօպիստը և ոսկէ դարը «մեր ետևը չէ, ինչպէս բանաստեղծներն են ասում, այլ մեր առջև, ապագայում...» «Պատերազմը պիտի տեղի տայ խաղաղութեան. քանդող, աւերիչ աշխատանքը՝ շինարար ու արդիւնաւոր գործունէութեան, վարձու աշխատանքը՝ ընկերակցութեան։ Սէրը պիտի գայ դուրս մղելու ատելութիւնը, համերաշխութեան զգացմունքը պիտի փոխարինէ թշնամութեան ու անտագօնիզմին և ընդհանուրի բարօրութիւնը պիտի վառէ փոքրաթիւ մարդկանց առանձնաշնորհումները»։ Կեցցէ երջանկութիւնը և թող չքանայ քրիստոնէական ասկետիզմը, աղքատութեան ամուլ քարոզները, ճգնաւորական սին մաքսիմները...

Սէն-Սիմօն ստեղծեց, մի փառահեղ պլէադա վեհանձն ու կարող մտածողների—Բազար, Անֆանտէն, Պիեռ Լեռուռ, Բիւշէ, Բլանկի և այլն—որոնք արծարծեցին ուսուցչի մտքերը, քարոզեցին մարդկային բովանդակ վերածնութիւն, կանանց ու պրոլետարիատի ազատագրութիւն և այլն։ Մարդկութեան ծաղիկը կամ ընտրեալների դասակարգը (l'élite humaine) պէտք է կազմեն արտիստները, որոնք յուզում ու շարժում են մարդկանց, գիտնականները, որոնք զարգացնում, լուսաւորում են նրանց և ապա արդիւնաբերողները, որոնք ղեկավարում են նրանց նիւթական գործունէութիւնը։ Նրանք պիտի միանան մի ընդհանուր նպատակի շուրջը—բարձրացնել ամենաբազմաթիւ և ամենաչքաւոր դասակարգի հոգեկան, ֆիզիքական վիճակը, մղել նրան դէպի բարօրութիւն... Նրանք պիտի փոխեն սեփականութեան սիստէմը, պիտի փոխեն և ընտանիքի ձևը։ Սեփականութիւնը պիտի պատկանէ արժանաւորներին և ժառանգական չը պիտի լինի հասարակութեան մէջ։ Մարդիկ հաւասար են. բոլոր հարստութիւնները պիտի ժառանգեն հասարակութեանը, ոչ ընտանիքին։ Ոչ մի ուրիշ անհաւասարութիւն՝ բացի նրանից, որ հիմնուած է ընդունակութիւնների վրայ։ Կինը նոյնպէս վայելում է հաւասար իրաւունքներ։ Տղամարդու հետ նա կազմում է մի հաւաքական ամբողջութիւն, տղամարդու հետ նա միանում է կամ բաժանւում, երբ կամենում է։ Ոչ մի ճնշում, հասարակական և պետական ոչ մի կապանք սիրոյ, ազատութեան դէմ, ամուսնութեան և ապահարզանի դէմ...

Ժամանակակից սոցիալիզմի մաքսիմներն են դրանք, որ ծանուցւում էին մօտ 80 տարի սրանից առաջ։ Դպրոցի համարձակ ներկայացուցիչներն աւելի հեռու էին գնում իրենց քարոզների մէջ, նրանք ազդարարում էին պրոլետարիատի գալոց ցնցումները, գուշակում էին սոցիալական մեծ յեղափոխութիւնը...

«Միթէ—բացականչում էր Անֆանտէն, դիմելով բուրժուաներին—միթէ պրոլետարները չը գիտեն, որ դուք բուրժուաներդ, դուք երրորդ դասակարգդ, ամբողջ յեղափոխութիւն էք արել, տապալել էք գահեր ու ազնուականներ և դրանով սովորեցրել էք ձեր վաղեմի տէրերին՝ ականջ դնել ձեր պահանջներին... Օգնեցէք, ուրեմն ազնուականութեան ու կղերի դասերից և դուք, որ նրանցից աւելի լուսաւոր ու բանիմաց էք, մի մղէք նոր երրորդ դասակարգը դէպի մի այնպիսի կացութիւն, ուր նա ստիպուած լինի վայր գլորել ձեզ գահից... Ես զգում եմ հէնց այս վայրկեանիս, որ փոթորիկը վրայ է հասնում, ես տեսնում եմ կայծակները, ես լսում եմ որոտումները»...

Հզօր, շանթալի սպառնալիքներ, որ սակայն թուլանում, նսեմանում են հէնց այն պատճառով, որ սոցիալիզմի այդ անդրանիկ թէօրետիկոսները՝ մի զարմանալի լաւատեսութեամբ՝ դեռ յոյս էին տածում իշխողների բարեացակամութեան վրայ, դեռ հնարաւոր էին կարծում սոցիալական մեծ յեղաշրջումը՝ դրամատէր բուրժուազիայի ձեռքով։ Այստեղ է թէօրիաների ցնորականութիւնը, ուտօպիզմը։

Ոչ պակաս պատկառելի և հմայիչ է Ֆուրիէի դէմքը։ Նա տուեց առաջին խոր անալիզը կապիտալիստական կարգերի։ Առաջին անգամը նա անողորմ քննադատութեան ենթարկեց կապիտալիստական, դասակարգային քաղաքակրթութիւնը, ուր նրա խօսքով «ծայրայեղ աղքատութիւնը բղխում է հէնց ծայրայեղ առատութիւնից»...

Մարդը է, ինչ որ է, նրան միշտ ղեկավարելու են հաճոյքները, հարստութեան սէրը։ Նրա կրքերը, տենչանքները յաւիտենական են և օրինաւոր։ Պէտք է ապա թէ հագուրդ տալ այդ տենչանքներին։ Պէտք է հետևել բնութեան, չը խեղդել, չը սանձահարել հոգեկան մղումները, որոնք, եթէ ընդունեն ցանկալի ուղղութիւն՝ կարող են միայն ծառայել ընդհանուր հասարակական շահին, «տիեզերական ներդաշնակութեան»...

Այսպէս է տրամաբանում Ֆուրիէն։ Եւ նա առաջարկում է իր պանացէան, համադարմանը. «Յեղափոխութիւնն անհրաժեշտ չէ, հիմնեցէք միայն մի պարզ, օրինակելի համայնք կամ փալանստեր և նրա արդիւնքն այնքան մեծ կը լինի, այնքան հրաշագործ, որ ամբողջ երկրագունդը կը գրկէ, կընդունի նոր սիստէմը»։

Փալանստերի մէջ կեանքը պիտի լինի այնպէս կազմակերպուած՝ որ իւրաքանչիւրը ինքզինքն զգայ ազատ ու երջանիկ, որ անհատական երջանկութիւնը ներդաշնակ լինի ընդհանուր հաւաքական երջանկութեան հետ։ Բնակարանները և հասարակական բոլոր հիմնարկութիւնները, կրթութիւնն ու դաստիարակութիւնը, աշխատանքը, ամբողջ տնտեսական, ընտանեկան, մտաւոր ու հոգեկան կեանքը այնպէս պիտի կանոնաւորուած լինին, որ մարդիկ, բոլորը հնարաւորութիւն ունենան վայելելու ամենաբազմազան հաճոյքներ։ Երկրագործական ու ինդուստրիական կամաւոր բանակները կերթան աշխատանքի, ինչպէս հանդիսաւոր մի տօնի, կերթան հաւաքական ուժերով մշակելու երկրագունդը, որը կը բարգաւաճէ, կարգաւորէ, կը կերպարանափոխէ... Աշխարհը, մի խօսքով, կը դառնայ երկրաւոր մի դրախտ»։

(Շարունակ.)

Ego

*) Տես «Յառաջ» № 76։

գործադրել յայտարարել, բայց տեսուչը ինքը նախօրօք դասերը փակուած է յայտարարում և առաջարկում է աշակերտներին ցրւել *) խոստանում է գրաւոր յայտնել աշակերտներին նրանց վիճակի մասին (դասարաններ փոխելու և այլն)։ Գիւղելի միջոց աշակերտների հաւաքական ոյժը խորտակելու համար։

Աշակերտը արտաքսուած է «Ընկերում» թերթակցելու և «այլ» մեղքերի համար, որ բարւոք են գտնում թաքցնել դատապարտեալից, իսկ և իսկ ռուս քաղաքական յանցաւորի վիճակին է ատնդծւում։

Մասնաւոր խօսակցութեան մէջ այդ տղայի հետ, տեսուչը մինչև անգամ յայտնում է որ, եթէ նոյն իսկ նրա անմեղութիւնը պարզւի, այնուամենայնիւ արտաքսուած է, որովհետև աւելի եղաւ այսքան «անկարգութիւնների»։ Սա այնքան անհաւատալի է նոյն իսկ ճեմարանի քաջ տեսուչից, որ ես կասկածական նշանի տակ կը դնէի, եթէ ամենաճիշտ աղբիւրից չը լինէր տեղեկութիւնս։

Աշակերտութիւնը կատարեալ խաղալիք են ուզում դարձնել իրենց ձեռքում. անկարելի է լռել, նոյն իսկ ոճիր գործած կը լինենք, եթէ չը գրենք Ջասկի տունիրին պատահած բոլորշ ամօթալի դէպքը։

Մի խումբ աշակերտներ գնում են, նստում պրօկուրօրի մակոյկը գրօսնելու լճի վրայ։ Պ. պրօկուրօրը գալիս է և ամեն տեսակ փողոցային հայհոյանքներ թափում աշակերտների գլխին. և ինչ էք կարծում. հայր տեսուչը փոխանակ ռազի կանգնեցնելու ամբողջ ուսուցչական խումբը և պաշտպանելու աշակերտների պատիւը, գնում է և պրօկուրօրից պաշտօնապէս ներողութիւն խնդրում…

Ահա սա է Գէորգեան ճեմարանի մթնոլորտը, ահա այն վայրը, ուր մեր հոգևորականները հաւաքել են երկրի զանազան ծայրերից հարիւրաւոր մանուկներ ու երիտասարդներ և իրենց ամբողջ ոյժը կենտրօնացնելով գլորցի շուրջը, վարւում են երիտասարդութիւնը սպանիչ «հոգևոր» թոյներով, սպաղդայում իրենց փոխանորդներին ունենալու համար։

Եւ եթէ անվիճելի է, որ արդէն հասել է ժամը հիմնովին վերանորոգելու մեր ժողովրդական-կրթական հիմնարկութիւնները, ընդմիշտ ազատելու նրանց հայ կղերի փաղաքշանքներից, ապա ուրիշ անհրաժեշտ է և, եւան հանել բոլոր այդ ոճրագործներին և յանձնել ժողովրդական անողոք դատաստանին։

Ես չը խօսեցի գլորցական ծրագրի մասին։ Այդ մասին երկու կարծիք լինել չի կարող. գլորցը անջատելու է եկեղեցուց և նրա ծառաներից։

Գպրոցը գիտութեան է ծառայում և միստիցիզմի սահմանները ոտք չի կոխում. չի կարելի հաշտեցնել անհաշտելին։

Մենք փաստօրէն կարող ենք բաժանել գլորցը եկեղեցուց մինչև որ կը գայ այն օրը, երբ ամբողջ ռուս ժողովրդի հետ միասին, կաչողացնենք և եկեղեցու բաժանումը պետութիւնից, կը դարձնենք կրօնը մասնաւոր խղճի գործ, եկեղեցի իսկական հաւատացեալների սեփականութիւն և ոչ թէ պետական հիմնարկութիւն ու զէնք տիրող դասակարգերի ձեռքին ազգութեան և խաւարի մէջ պահելու համար աշխատաւոր դասակարգի օրէցօր աւելի և աւելի ըմբոստացող շարքերը…

Ա. Շահխաթունեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ալեքսանդրապոլ, 5 մայիսի

Ամսիս 2-ին կայացաւ Պետական Դումայի ընտրութիւնների երրորդ աստիճանը։ Մի քանի մարդիկ, օգտւելով դաշնակցութեան բանած պասիւ դիրքից, ապարէզ դուրս եկան և զանազան ծուռ ու մուռ ճանապարհներով սկսեցին ընտրողներ որսալ, մաքեր պղտորել։

Նախ նրանք խոշոր տառերով յայտարարութիւններ տպեցին և կպցրին ժողովրդական տան պատերին։ Յայտարարութեան միտքը սա էր։

—«Ով որ համակրում է ժողովրդական ազատութեան կուսակցութեանը (կադէտներին), թող ձայն տայ Գեղամ Տէր-Պետրոսեանին և Ա. Խատիսովին»։

Այս պարոնները իբր թէ պատկանում են վերոյիշեալ կուսակցութեանը։ Եթէ այստեղ գոյութիւն ունենար այդ կուսակցութիւնը և նա տպէր այդպիսի թերթեր, մենք ոչինչ չէինք ունենայ ընդդիմախօսելու։ Այդ ձևի պրօպագանդն ընդունուած է ամեն տեղ, բայց հարցը նրանումն է, որ Ալեքսանդրապոլում չը կայ ոչ միայն «բիւրօ», ինչպէս տպած էր մի ժամանակ «Մշակի» մէջ, այլ նոյն իսկ մի խմբակ և այդ բէկլամները տպած են հէնց այն պարոնների ձեռքով, որոնք ընտրւել էին ուզում։

Երկրորդ՝ նոյն մարդիկ բազմաթիւ թերթիկներ են տարածել ժողովրդի մէջ յար և նման այն թերթիկներին, որ բաց է թողել ոստիկանութիւնը «предлагаю въ выборщики» վերտառութեամբ։ Տարբերութիւնը միայն նրանումն է, որ սրանց թերթերի մէջ անուն և ազգանունների հանդէպ մեծ տառերով գրւած է պ. Տէր-Պետրոսեանի և Խատիսովի անունները։ Սա մի մանեօվր է. նրանք կարող էին ուրիշ ձևի թերթեր տարածել, բայց ոչ թէ շահագործել պաշտօնական բլանկները և այդպիսով մաքեր պղտորել։

Գործը, սակայն, սրանով չէ վերջանում։ Ամենից գլխաւորն այն է, որ այդ պարոնների զանազան հայկազուններ մէկ-մէկ մօտենում են քաղաքային տան մօտ խմբւած ընտրողներին և որոնելով նրանցից ուրիշ անուններով գրւած պաշտօնական թերթերը, տալիս են իրենց պատրաստածները և հաւատացնում, թէ

*) Նոյն միջոցը գործ է դրւում կառավարութեան կողմից ուսանողական դասադուլների առաջն առնելու համար։

այդ է օրինականը։ Երրորդ՝ երկու-երեք օր առաջ քաղաքում լուրեր են տարածել, թէ ամենքը պարտաւոր են ներկայ լինել ընտրութիւններին, թէ բացակաները կը պատժւեն 500 ր. տուգանք վճարելով կամ 3 ամիս բանտ նստելով, թէ ընտրութիւններին չը մասնակցողները կը ճանաչւեն իբրև «սօցիալիստներ» և այլն և այլն։ Փողոցում վխտացող հետակ և ձիաւոր բազմաթիւ զօրքերը կարծես թէ սկսամայից հաստատում էին մութ ուժերի տարածած հրէշաւոր լուրերը։

Ահա այսպիսի պայմաններում ընտրւեցին պ. Գեղամ Տէր-Պետրոսեանը և Ա. Խատիսովը։ Ովքեր են այս պարոնները։ Առաջինը յայտնի է. նա Ալեքսանդրապոլեան ընտրութիւնների յաւիտենական մօնօպոլիստն է. նա ցոյց տւեց իր ընդունակութիւնները հայ-թուրքական համագումարի մէջ։ Երկրորդը՝ պ. Ա. Ասատուրով, բայց սրա մասին չարժէ կանգ առնել, որովհետև նա պ. Գեղամի տաւերն է և ընտրւած է յատկապէս այն պատճառով, որ վերջնական ընտրութիւնների ժամանակ աւելի ռէլիեֆ կերպով պատկերանայ առաջինի մեծութիւնը…

Ա. Տ.

ԼՐԱՏՈՒ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, մայիսի 7-ին

Երէկ Թիֆլիսում լուր տարածւեց, որ Բաթումի մօտ, Մախինջաուրի կայարանում սպանել են Բաթումի ամերիկական հիւպատոս Ստիւարտին։

Գանձակ, մայիսի 7

Այստեղ լսւած գրութիւն է։ Թուրքերը քոչերը հաւաքած սպառողական գիրք են բռնել։ Հայերը վախենում են, թէ քոչը բարձրանալուց յետոյ, կսկսեն անկարգութիւններն ու աւազակութիւնները։

Թուրքերից շատերը վախենում են սպահապան նշանակւած կօզակներից և նոյն իսկ խնդրում են, որ հեռացնեն նրանց։

—Մենք կը հաշտւենք հայերի հետ և այնպէս կը բարձրանանք սարը, ասում են նրանք։

Տեսնենք վերջը ինչ է լինելու։

Բաշքէնդ, մայիսի 7

Տեղական վաշխառուների ճանկերից ազատւելու համար հասարակութիւնը վճռել է մի գիւղական բանկ բաց անել։ Գործի սկզբնաւորութեան համար անհրաժեշտ է գոնէ 2000—3000 ր.։ Այդ գումարը գտնելու համար գիւղացիները վճռել են փոխառութեան դիմել՝ 8% վճարելով։

Եթէ այդ բանը աջողւի, մեծ բարիք կը լինի Բաշքէնդի համար, որովհետև վաշխառուները միայն 24-50%-ով են պարտք տալիս։

Աւելի քան ցանկալի է, որ ունևոր մարդիկ այդ գումարով օգնութեան հասնեն քաջ Բաշքէնդին և դրանով աջակցեն նրա ինքնօգնութեանը, որը կարող է գէթ մասամբ բարւոքել քայքայւած վիճակը։

Ղազախ, մայիսի 7

Ինչպէս յայտնի է Լևիցկու հրամանով հաւաքւեց թէ հայ և թէ թուրք ազգաբնակութիւնից վնասների արժողութիւնը։

Հայերը լիովին մուծին պետական գանձարանը իրենց գումարի մի երրորդ մասը, բայց թուրքերը չը կարողացան նշանակւած օրը փողը բերել և միայն ապրիլի 30-ին վճարեցին փողը, այն էլ ոչ լիովին, մօտ 5 հազար պակաս (մօտ 70 հազար)։

Լևիցկու թոյլտւութեամբ ընտրւեց մի մասնաժողով, որը պիտի բաժանէր փողերը։ Հայերը խնդրեցին գեներալից թոյլտւութիւն այդ գումարը բաժանելիս, հարուստների հասնելի գումարից մի մասը յատկացնել աղքատներին։ Գեներալը թոյլ տւեց, բայց մեր հայ հարուստները իրենց այստեղ էլ ցոյց տւին՝ չը նայելով, որ չը գիտեմ ինչպէս, հարուստների վնասը շատ լայն էր գնահատւած, հարուստները չէին ուզում աւելորդ տալ նրան, ով քիչ, կամ բոլորովին ոչինչ չէր ստացել։

Բայց մասնաժողովին յաջողւեց իր լաւ միտքը կատարել։

Երբ հայերը փողը յանձնել էին Լևիցկուն, շատ խնդիր էլ էին տւել նրան, որ հաշտ. դատաւոր Պետրովը շատ կողմնապահ է կատարել վնասների բաժանումը՝ թուրքերի վնասը աւելի է գնահատել, քան հայերինը։ Այդ գանգատները լսելով, Լևիցկին նոր քննիչ մասնաժողով է նշանակում, որի մէջ կան երկու հաշտարար դատաւոր (Պետրովը չը կայ), հարկերի տեսուչը և հայերի ու թուրքերի կողմից մէկ մէկ ներկայացուցիչ։ Բացի այդ ամեն մի վնասւած գիւղ ընտրում է իր ներկայացուցիչն էլ։ Այս մասնաժողովը դեռ չի գործում, սպասում է Լևիցկու վերադարձին Թիֆլիսից։

Շամշադինի գիւղերը վճռեցին կրցնիրին բաժանել բոլոր գիւղերում. ամեն մի գիւղը յատկացրել է հող. սերմացուն էլ նպաստամատոյց յանձնաժողովն է գնել։ Այդպիսով կրցնիրները աշնանը կունենան հայ և մուրացկանութիւն չեն անի։

Երէկ լուր տարածւեց, որ Լևիցկին հեռանում է Ղազախից։ Աղստաֆայի վաճառականները այդ լուրին հաւատալով, վճռել են իրենց խանութներն Աղստաֆայից տեղափոխել, վախենալով անկարգութիւններից։

Տ. Մ.

Ջիւանշիր գ., մայիսի 5

Ջիւանշիր գաւառում Թարթառ գետի ափերին ապրող Բէյլանի ցեղին պատկանող թուրքերը, որ վաղուց յայտնի էին իրենց աւազակութիւններով հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հեռացել էին շրջակայ թուրք գիւղերը։ Այժմ այդ գիւղերի բնակիչները խնդրել են իշխանութիւնից, որպէսզի դրանց հեռացնեն և նորից իրենց բնակութեան տեղը վերադարձնեն, որովհետև անվերջ աւազակութիւններով մի չարիք են դարձել տեղական թուրք ազգաբնակութեան համար։

Իսկ հայերը խնդրում են, որ չը վերադարձնեն, որովհետև նրանք էլ վախենում են, որ դրանք վերադառնալով իրենց տեղերը, աւելի մեծ եռանդով շարունակեն նախկին քաջագործութիւնները։

Պետերբուրգ, մայիսի 6

«Рѣчь» լրագրի ասելով, մայիսի 6-ին, Պետական Դումայի նախագահ Մուրօմցեվին ցոյց տւեցան արտաքին յարգանքի բացառիկ նշաններ։ Քաղաքական խօսակցութիւն տեղի չունեցաւ։ Դեռ յայտնի չէ, թէ երբ է կայսրն ընդունելու այն պատգամաւորութիւնը, որը նրան մատուցանելու է Դումայի ուղերձ պատասխանը գահական ճառին։

Զուգդիդ, մայիսի 7

Երէկ բանտից ազատւեցին բոլոր քաղաքական բանտարկեալները։

Պետերբուրգ, մայիսի 6

Մեռաւ յայտնի խաւարամիտ հրապարակախօս, «լեհակեր» Սկուլչևսկին, որը աշխատակցում էր գլխաւորապէս «Новое Время» թերթին։

Լոնդոն, մայիսի 6

«Standart» լրագիրը հաղորդում է, որ Անգլօ-Ռուսական համաձայնութիւն կայացնելու վերաբերմամբ ընթացող բանակցութիւնները յաջող են գնում։ Համաձայնութիւնը կայանալու է Տիբէթի, Պարսկաստանի, Աւղանիստանի և Տաճկաստանի վերաբերմամբ։ Բրիտանական և Ռուսական ազդեցութիւնների շրջանը կը սահմանափակւի Պարսկաստանի հարաւով և հիւսիսով։ Երկաթուղային հարցը կը վճռւի՝ անդրկովկասեան երկաթուղային գիծը մինչև Բաղդադի գիծը հասցնելով։ Գերմանիային կը պատկանի գլխաւոր կօնտրօլը Պօլիս-Բաղդադ երկաթուղային գծի վրայ, Բրիտանիային-Պարսկական ծոց-Բաղդադ երկաթուղային գծի վրայ։ (Պ. Հ. Գ.)

Բագու, մայիսի 6-ին

Գաւառում ընտրող ընտրող ընտրւած կադէտների թեկնածու պ. Գուլամը հրաժարական ներկայացրեց. նրան փոխարինեց նրա փոխանորդ Նաղչաֆ Ասլանովը։ Այսպիսով, բոլոր ընտրողները—թուրքեր են։ «Կադէտների» կուսակցութեան Բագուի կազմակերպութիւնը, ի նկատի առնելով իր կանդիդատի պ. Նաւօյևի սպանութիւնը, վճռեց մինչև ընտրութիւնների օրը չը յայտարարել իր պատգամաւորական թեկնածուների անունները։ Բացի դրանից կուսակցութիւնը դիմեց Կովկասեան Փոխարքային, խնդրելով նրանից պաշտպանել քաղաքացիների կեանքը և ընտրութիւնների ազատութիւնը, որովհետև դրանց բացակայութիւնը պիտի վերջ ի վերջոյ ստիպէ կուսակցութեանը հրաժարւել ընտրութիւններին մասնակցելուց։

Բանւեց մի գաղտնի տպարան, բանտարկւած է մի երիտասարդ, որը բնակւում էր այն սենեակում, որտեղ սարքւած էր այդ տպարանը։

Բալախանիում, ջրհորներից մէկի վրայ գտնւած է մի քանի գիւղ գլուխը կտրւած, և ապա խարոյկի վրայ այրւած։ Բանտարկւած է այդ գավիր չարագործութեան մէջ կասկածւող մի պարսիկ։ Ենթադրում են, որ սպանութիւնը վրէժխնդրութիւնից է գրդւած։ Երէկ երեկոյեան անյայտ մարդիկ քաղաքային այգու մօտ սպանեցին մի թուրքի։ Մարդասպանները փախան։ (Պ. Հ. Գ.)

Պետերբուրգ, մայիսի 6-ին

Այստեղ հասաւ այսօր 24 հոգուց կազմւած հինական այն միաբան, որը շրջագայում է եւրօպական երկրներում, այն տեղերի պետական և հասարակական հիմնարկութիւններն [illegible] նպատակով։ Պատգամաւորութիւնը ներկայ կը լինի Պետական Դումայի և Խորհրդի մի շարք նիստերին։ (Պ. Հ. Գ.)

Թեհրան, մայիսի 6-ին

Շահի առողջական դրութիւնը հետզհետէ վատանում է։ Թեհրանում տիրող սաստիկ տօթերի ազդեցութեան տակ Շահի հետ շատ յաճախ կրկնւում են ուշագնացութիւններ և սուր կերպարանք է ստանում նրա մէջքացաւի հիւանդութիւնը։ (Պ. Հ. Գ.)

ԹԻՖԼԻՍ

✦ Մայիսի 6-ին, շաբաթ երեկոյեան ժամը 8-ի մօտերը, Թիֆլիսի VI քաղաքամասում մի հայ զինւոր, երկու ռուս զինւորների հետ առանց զէնքի կանգնած են եղել իբր պահապաններ, միայն հեթից դուրս։ Այդ ժամանակ նրանց մօտենում է հաչակաւոր Ալի-Բալան և հրաւիրում այդ 3-ին օղի խմեցնելու. ռուսները գնացել են, իսկ հայը—ոչ։ Ալի-Բալան բարեհաճում է հարցնել, թէ ինչ ազգից է այդ զինւորը. երբ իմանում է նրա հայ լինելը, կրօն, հաւատ և այլ սրբազան հայհոյանքներ է թափում։ Դուրս է գալիս պահակատանը պատկած միւս հայ զինւորն էլ և հրաւիրում այդ սրիկային չը հայհոյել։ Այդ վայրկեանին մօտակայ խանութից դուրս է թռչում մի ուրիշ թուրք սրիկայ և դաշոյնը շեշտակի վրայ է բռում դէպի հայ զինւորներից մէկի կողքը, բայց զինւորի ուսովը բյած շինէլի փաթեթը թոյլ չէ տալիս չարագործին վիրաւորելու զինւորին. զինւորն է միայն ծակւում։ Հայ զինւորները վազում են ներս, հրացանները վերցնելու, իսկ Ալի-Բալան այդ րոպէին սաստիկ հարւածում է զինւորներից մէկին բռունցքով։ Նրանք զէնքերն առնում, դուրս են գալիս, բայց դաշոյնով խփող թուրքն արդէն թաքնւած է լինում և ոստիկաններն ու պլիսատւի օգնականը հաւաքւած են լինում, չեն թողնում, որ գործը սուր կերպարանք ստանայ։ Գործը քննւում է։ —Ալի-Բալան և մի ուրիշ բէգ գնում աղաչում, գրամ են առաջարկում զինւորին հաշտւելու, սպառնալով հակառակ դէպքում 6 օրւայ ընթացքում սպանել նրան։

✦ Երէկ առաւօտեան ժամը 11-ի մօտերը Օլգինսկի փողոցում էլեքտրաքարշի տակն ընկաւ և սպանւեց 11 տարեկան գիմնազիայի ֆրանսերէնի ուսուցիչ Բէնուայի։ Արդէն 2-րդ զոհն է այս վերջին օրերում… Պէտք է միջոցներ ձեռք առնել, թէ ոչ…

✦ Երէկ Բագու մեկնեցին Փոխարքայի խորհրդի անդամ պ. Զաւկովսկին և առանձին անձնաբարութիւնների պաշտօնեայ պ. Տօլստոյը՝ մասնակցելու նաւթարդիւնաբերողների համաժողովին։

✦ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը 540,000 րուբլի նշանակել է, որպէս զի աւելացնեն Անդրկովկասի երկաթուղիների այն ծառայողների ռոճիկը, որոնք տարեկան 660 րուբլուց չեն աւելի ստանում։

✦ Թիֆլիսի «հայրենասէրների» ընկերութեան անդամները Թագաւոր Կայսրին մի ուղերձ են ուղարկել, որով խնդրում են ոչ մի ներում չը շնորհել քաղաքական և կրօնական գործերի յանցաւորներին։

✦ Երէկ, երեկոյեան ժամը 7-ին հինգ անյայտ զինւած մարդիկ մտան Ալաւերդու Ալմնանսկի բազարում գտնւած ոսկերիչ Յարութիւնեանի խանութը մահւան սպառնալիքով լռեցնելով խանութպանին՝ թալանեցին խանութը տանելով բաւական արժողութիւն ունեցող ոսկեղէններ և դրամ։

ԿՈՎԿԱՍ

✦ Արդահանից մեր թղթակից Խ. Տէր-Խաչատրեանը գրում է.

«Բացի երկու թուրք և մէկ ռուս ընտրողներից, որոնք ընտրւած էին Արդահանի շրջանից Կարս գնալու և այնտեղ մի ներկայացուցիչ ընտրելու՝ Կարսի նահանգից Պետական Դումա գնալու համար՝ Արդահան աւանից էլ մի ընտրող պիտի գնար։ Ընտրութեան օրը նշանակւած էր ապրիլի 27-ը։ Հայերի յարմար թեկնածուն համարւում էր բժ. պ. Ա. Շահ-Ազիզը, իսկ թուրքերինը՝ Զաքարիա-բէգ Աջարսկին (յայտնի հալւոստ կալւածատէր)։ Բայց ինչ-ինչ պատճառներով բոլորովին հեռացան ընտր. դաշտից և 100-ից աւելի խօսքից բաղկացած հեռագիր ուղարկեցին Փոխարքային՝ խնդրելով անւաւեր ճանաչել այդ օրւան ընտրութիւնները։ Նոյն մաքով հեռագիր գնաց նաև Կարսի նահանգապետին։ Ընտրութիւնները յետաձգւած են մինչև մայիսի 9-ը Փոխարքայի կարգադրութեամբ։ Մանրամասնութիւնները կը հաղորդեմ ընտրութիւններից յետոյ»։

✦ Բագու. Ընդհ. նահանգապետը մայիսի 5-ին «Իրշադ» լրագրի հրատարակիչ Իսա բէգ Աշուր-բէգովին և Տիգրան Յարութիւնեանցին արտօնեց հրատարակել հայերէն և թուրքերէն լեզուներով մի օրաթերթ։

Լրագիրը պիտի կոչւի «Դավէթ» (Կոչ). նպատակն է հայ ու մահմեդական ազգերի միջև համերաշխութիւն հաստատել, հեռացնել ջանալով նրանց միջև տեղի ունեցած թշնամութիւնը։

Մօտ օրերս լոյս է տեսնելու լրագրի առաջին համարը։ «Իրշադ»

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ Հոկտ. 17-ի Միութեան մէջ որոշման II կէտի առթիվ ձայները բաժանւեցին և ընդհարում տեղի ունեցաւ կուսակցութեան ղեկավարների մէջ. կենտրօնական կօմիտէի անդամ Ա. Պլևնկօն յայտարարեց, որ ինքը դուրս է գալիս միութեան անդամութիւնից, որովհետև խորհուրդը մերժել է II կէտը։ Իսկական կէտում ասւած է հետևեալը. «Աչքի առաջ ունենալով, որ առաւական քաղաքական կեանքի զարգացումը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ ազգաբնակութեան ներկայացուցիչները [illegible]… —Դումայի [illegible]

[illegible]

✦ «Р. В.» լրագրի Պետերբուրգի թղթակիցն ասում է, որ հիմք ունի կարծելու, թէ կառավարական շրջաններն ամեն կերպ աշխատում են [illegible] … Դումայում [illegible] … («Дума»)

✦ Մայիսի 1-ին Դումայի անդամ Բուսլօվը (Մօգիլօվից) հեռագիր է ստացել [illegible] … (Бирж. Вѣд.)

✦ Ապրիլի 30-ին, Պետերբուրգի մօտ, Օզերկայում, Հիլերինսկի տիկինը [illegible] …

✦ Պետերբուրգի ոստիկանական բաժնում վերջին օրերս, ասում է «Дума» լրագիրը [illegible] … (Д.)

ՄԱՄՈՒԼ

Երբ մենք, քննադատելով Դումայն, համարում ենք այդ ոչ միայն անօգուտ, այլ որոշ տեսակէտից նոյնիսկ մի վնասակար հիմնարկութիւն, որը կարող է գործիք ծառայել բիւրոկրատիայի ձեռքին [illegible] …

Մի շարք յօդւածներում մենք ցոյց ենք տւել, թէ որքան ճիշտ է արդարացի է մեր վերաբերմունքը դէպի [illegible] …

«Վերջերս»,—ասում են մեզ Դումայի պաշտպանները,—[illegible] … «Vorwärts»-ում հետևեալը.

[illegible]

արհամարհանքը պրոլետարիատի շահերի վերաբերմամբ սաստիկ վրդովմունք առաջացրեց կադէտ-բանւորների մէջ, այն ժամանակ միայն «բանւորների բարեկամ» պ. Ստրուվէն իրեն ստիպւած զգաց մի բանաձև առաջարկելու, որը պահանջում է «բաւարարութիւն տալ բանւոր դասակարգի ամենաէական կարիքներին», իսկ Թեացածում՝ յանձնարարում է տալ խնդիրը մի մասնաժողովի քննութեան։

Դրանից յետոյ պարզ է, ասում է թերթը, որ բոլոր բանւորները

պիտի միանան բանւոր պատգամաւոր Արտամօնովի այս բացականչութեանը «կադէտները իրենց ծրագրով ինձ խաբեցին!» Եւ այս բացականչութիւնը կը սթափեցնէ կադէտների սիրուն ճառերից կուրացած բանւորութիւնը։

«Մենք համարեա ոչնչով չենք տարբերւում սօցիալիստներից»,—ասում են կադէտները հրապարակական ժողովներում, միայն մենք ընդունում ենք սօցիալիզմը, իբրև հեռաւոր նպատակ։ Թող «Vorwärts»-ի վերոյիշեալ խօսքերը լինեն պատասխան այսպիսի անպատշաճ յայտարարութիւնների և... խաբեբայութիւնների։

Կենտրօնական կօմիտէի առաջարկած տակտիքական բանաձևը,—շարունակում է թերթը,—խիստ յարձակումների ենթարկեց զանազան ճառախօսների կողմից, գլխաւորապէս իր անորոշութեան և «համեստ» բնաւորութեան պատճառով։ Բանաձևը խօսում է շարունակ «արդարացի» ազգային պահանջների, «սոցիալական» կարիքների և այլն. սակայն այս բոլորը կաուչուկային բնաւորութիւն ունեցող գաղափարներ են, որոնք մի կողմից թէև շատ բան, բայց միևնոյն ժամանակ և ոչինչ չեն պարունակում...

Ընդհանրապէս հարկաւոր է ասել, որ առաջարկւած բանաձևերը աւելի արմատական են, քան ընդունւածները։ Այս հակասութեան բանալին հարկաւոր է որոնել կուսակցութեան ներսում սկսւող ջլատման մէջ. փոքրամասնութիւն կազմող արմատականներն են եղել, որոնք խօսել և առաջարկութիւններ են արել, մինչդեռ մեծամասնութիւնը բաղկացած է հանգիստ և «խելամիտ» մարդկանցից, որոնք քիչ խօսքեր են փառնել, բայց «փառնդաւոր» երևացող ամեն մի բանաձև սխտեմատիքաբար զամբիւղն են նետել...

Կադէտների մեծամասնութիւնը չէ ուզում բոլորովին լսել արմատական քաղաքականութեան մասին և գնում է Դումա բացարձակ ժողովրդական ղեկավարութիւններով—բանակցութեան մէջ մտնելու կառավարութեան հետ...

Ուրիշ ինչ կարող են անել. խօսք ու Թուղթ, խնդիր ու աղերսանք, — ահա նրանց ամբողջ տակտիկան և քաղաքականութիւնը։ Եւ այդ ամենը կառավարութիւնը կարող է ընդունել և չընդունել։

Ցետոյ...

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻ

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՔՐՕՆԻԿ

Սօց. դէմօկրատական «Волна» լրագրում զետեղւած է կենտրօնական կօմիտէի կոչը բանւորներին, որով հրաւիրւում են բանւորները տօնելու մայիսի 1-ը յանուն հետևեալ պահանջների. 1) 8 ժամեայ բանւորական օր, 2) վերացում մշտական բանակի և զինւոմն ամբողջ ժողովրդի և 3) լիակատար քաղաքական ազատութիւն, ազատութիւն պրօլետարական կռւի և պետութեան դէմօկրատական կազմութիւն։

—

Փօստ-հեռագրական այն գործաւորների պաշտօնեաները, որոնց արձակել են գործադուլին մասնակցելու պատճառով, վճռել են դիմել Դումայի աշխատաւորական խմբակին, խնդրելով միջնորդել որ անմիջապէս տարածել և իրենց վրայ և որ իրենց նախկին իրաւունքները վերականգնեն։

—

Սօց.-յեղափոխականների օրգան. «Социал. Библ.»-ի ամսագրի № 2-ի և «Народн. Ж.» ամսագրի № 1-ի վրայ արգելք է դրւել ապրիլի 27 ին և նրանց խմբագիրները գատի են ենթարկւել 129-րդ յօդւածի հիման վրայ։ Պետերբուրգի ժանդարմերիայում եղած գործը ս.-յեղափոխականների մասին միացրել և կազմել են մի գործ «սօց.-յեղ.-ի Պետերբուրգի կազմակերպութիւն» անւան տակ։ Մեղադրւածների թիւը 200 հոգի է։ (Բ. Վ.)

ԹՈՒՐՔԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՆՈՒՄ

Վան, ապրիլի 22-ին

Երզրումի Թուրք ժողովրդեան շարժումը կառավարութեան դէմ Վանի մէջ ուրիշ նոր կացութիւն առաջ բերաւ. հոչակաւոր Շէյխ-Սայիդը գլուխ անցած բազմօթիւ քիւրդ, Թիւրք քիւրդ փառնաղիկոսների, Ջանթեզարների, բոլորովին զինւած՝ սպառնում է բոլորին Կալրջամ-Ջամին, որ քաղաքի մայր մզկիթն է, և այսպիսի քարոզներով գրգռում է նրանց հայերի դէմ. «Հայերը արդէն պատրաստւած են ձեզ կոտորելու, դուք մեռած էք, ու թող տաք հայերին իրենց ցանկացածն անեն։ Փանատիկոս ամբոխը մզկիթից դուրս գալուն պէս երևի կը սկսէր կոտորածը, եթէ Կուսակալը խոհեմ չը պաշարէր մզկիթը և չը ձեռքակալէր պարագլուխներին։ Շէյխ-Սայիդը տարւեց Աղգիստան Կուսակալի մօտ՝ Պօլիս ուղարկելու համար։

Այս դէպքի պատճառով խանութները 3 օր փակ մնացին. քաղաքի մէջ տարածւած լուրերին նայելով, այս խռովութիւնները յարուցանելու դրդողն է զինւորական Միրալայ Եդհէմ բէյը։

Այժմ Թուրքերը սկսել են նորանոր ժառանութիւններ անել. Մալա-Կասըմ գիւղացի երեք Թուրք յայտնի են կառավարութեանը, որ Ալիւր գիւղի մէջ յեղափոխականներ կան։ Նրանք ստորագրութիւն են տալիս և այսպիսի մի պայման կապում կառավարութեան հետ, որ եթէ յեղափոխականներ գտնւեն, կառավարութիւնը պարտաւոր է ամեն մէկին 30-ական օսմ. լիրա վճարել. իսկ եթէ չը գտնւեն, իրենք 10-ական լիրա տան։ Կառավարութիւնը մի գիշեր 200 զօրքով պաշարեց ու խուզարկեց յիշեալ գիւղը, բայց ոչինչ չը գտնելով՝ ձեռնունայն յետ դարձաւ, այժմ Մալա-Կասըմի մատնիչ Թուրքերը քաղաք են կանչւած, ու իրենցից կը պահանջւի 30 լիրան։ Ամեն մի բոյլափոխում, կառավարութիւնը կուզէ թէ իր գործը տեսնել և թէ դրամ կորզել։

Տուրքերի ծանրութեան մասին արդէն շատ է գրւած. այդ ամբողջ աղէտների վրայ այժմ ծանրացել է հարկահաւաքութեան մի նոր ձև էլ։ Մի գիւղ գնալու ու հարկ պահանջելու համար առաջ մէկ երկու զապթիէով էին բաւականանում, իսկ այժմ ուղարկւում են տասը—քսան սուվարի (հեծելազօր), որ ուզածին չափ ուտեն, խմեն, ծախեն, տանեն, ու ձնչեն, այս վիճակը այլևս անկարելի է տանել։

Մարտ ամսին նոր մարդահամար արին. համրիչները թէզքէրները (ծննդական թուղթերը) առնելով, նորերը ավին, և ամեն մէկ համրիչից 2 ղուրուշ քան փարա առան գրեցին նաև նրանց կանանց, որ առաջ չը կար սովորութիւն դրանց վրայ էլ տուրք պիտի դրւի։

Ամեն տեղ աղքատութիւն ու թանկութիւն է Թուրք միւլթէզիմները (հացի կապալառու) ամբարելով գիւղերի ցորենն ու գարին, արհեստական կերպով բարձրացնում են գները ու սով առաջացնում։ Դրամ ունեցողներին ծախում են ուզած գնով, իսկ չունեցողներին տալիս են ապառիկ, գրաւ առնելով ի հարկէ։

Ծ.

ՄԻՏԻՆԳՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՆԵՐ

Պ. Խ. ՎԵՐՄԻՇԵՎԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Կիրակի, մայիսի 7-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում պ. Խ. Վերմիշևը մի դասախօսութիւն արեց «քաղաքական կուսակցութիւնների նշանակութեան» մասին։

Դասախօսութիւնը տևեց համարեա երկու ժամ։ Պ. Վերմիշևը ոչ մի խօսք չասեց Ռուսաստանի կուսակցութիւնների մասին և իր ընտրած թեման պարզաբանելու համար բաւականացաւ Եւրօպայում գործող քաղաքական կուսակցութիւնների ծագման, զարգացման և քաղաքական նշանակութեան պատմութիւնն անելով։

Դասախօսութեան բնեւը անգլիական քաղաքական կուսակցութիւններն էին, որոնց կազմակերպութիւնը, գործելակերպը, պայքարելու եղանակը պ. Վերմիշևի կարծիքով՝ օրինակելի են լինելու բոլոր երկրների կուսակցութիւնների համար և խորհուրդ տւեց Ռուսաստանումն էլ նոյն կերպով կազմակերպել կուսակցութիւնները։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցան տաք վիճաբանութիւններ, որոնք նւիրւած էին Պետական Դումայի քննութեանը, նրան բօյկօտ անելու կամ չանելու հարցին։

Առանձին հետաքրքրութեամբ ու ուշադրութեամբ վերաբերւեց ներկայ եղող հասարակութիւնը պ. Ժամակի և մի երիտասարդ մենշևիկ սօց.—դեմօկրատի ճառերին։

Առաջինը խիստ քննադատութեան ենթարկելով Պետական Դուման, պարլամենտի հասկացողութեան ժամանակակից ըմբռնողութեան այդ խայտառակ աղաւաղութիւնը, այդ «կեղծ—կօնստիտուցիան», պնդում էր բօյկօտի անհրաժեշտութեան վրայ։ Իր ճառի վերջում պ. Ժամակը կարդաց հրէական «Բունդի» 7-րդ կուսակցական համագումարի որոշումը Պետական Դումայի բօյկօտի մասին, որ ամբողջովին նըման է Հ. Յ. Դաշնակցութեան նոյնանպատակ որոշմանը։

Սօց.-Դեմօկրատ մենշևիկ հռետորը, բոլորովին համաձայն լինելով պ. Ժամակի հետ Պետական Դումայի գնահատման մէջ, միևնոյն ժամանակ ոչինչ դէմ չունենալով Դումայի ընտրութիւններին մասնակցելուն, ապացուցանում էր այն միտքը, թէ քանի որ Դումայում անհրաժեշտ է անոտք կռիւ մղել դեռ չը մեռած բիւրօկրատիայի դէմ ժողովրդական իրաւունքների համար, ուստի հասարակութիւնը շահագրգռւած է իր ձայնը տալու միայն այն կուսակցութիւններին, որոնք ունեն կազմակերպւած մասսաներ, որովհետև միայն այդ մասսաներն են, որ իրենց կռւով տեղն ու տեղը պիտի հնարաւորութիւն տան իրենց պատգամաւորներին խլել բիւրօկրատիայի ձեռքից ժողովրդական ազատութիւնները։

Այդ տեսակէտից նա նպատակայարմար էր գտնում ձայն տալ ոչ թէ կադէտներին, որոնք ոչ մի մասսա չունեն, այլ յեղափոխական կուսակցութիւններին, որոնց ուժը և մարտական կռիւը անժխտելի է։

Այնուհետև խօսեցին ուրիշ երեք հռետորներ էլ զանազան կուսակցութիւններից։

Բոլոր ընդդիմախօսողների ճառերի տպաւորութիւնը փչացրեց մի երիտասարդ ուսանող սօց.-դէմօկրատ, որը, երևի ուրիշ ոչինչ ասելիք չունենալով, սկսեց անտեղի և անյարմար հայհոյանքներ թափել կադէտների գլխին։ Այդ երիտասարդի աւելի շուտ արարքը, քան թէ ընդդիմախօսութիւնը, շատ աննպաստ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ։

Լաւ կը լինէր, եթէ ուրիշ անգամ չը կրկնւէին այդպիսի միջնադէպեր։

Ժողովը փակւեց ժամը 4-ին պ. Վերմիշևի մի կարճ, ոչինչ չը բացատրող, և նոր հարցերի և տարաձայնութիւնների հիմք տւող, պատասխան ճառով։

ԴԱՐՁԵԱԼ Պ. Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

II

Անցեալ անգամ մենք կարևոր չը համարեցինք երկար կանգ առնել պ. Հ. Առաքելեանի կուրիօզներով լիքն—թող թոյլատրի մեզ այսպէս անւանել—դասախօսութեան վրայ, որովհետև նա ոչ մի հասարակական հետաքրքրութիւն չէր ներկայացնում։

Բայց որովհետև «Մշակի» կիրակի օրւայ համարում զետեղւած տեղեկութիւնը այդ դասախօսութեան մասին, իր փաստերի մի քանի խեղաթիւրումներով կարող է մոլորեցնել այն հասարակութեանը, որը ներկայ չէ եղել այդ ժողովին, այդ պատճառով մենք ստիպւած ենք հետևեալ ապարկութիւնները անել «Մշակում» այդ առթիւ հրատարակւած մի քանի նկատողութիւնների մասին։

1) «Մշակը» հաղորդում է, որ իբր թէ Ե. Թոփչեանի ճառը շատ վատ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ։ Դրան մենք այսքանը կարող ենք ասել, որ «վատ» տպաւորութիւն թողած կը լինէր, նա ոչ թէ հասարակութեան վրայ, որը բուռն ծափահարութիւններով էր ողջունում Ե. Թոփչեանի ճառը, և այնքան համակրանքով վերաբերւում նրա արտայայտած մտքերին, այլ պ. Հ. Առաքելեանի վրայ, որը իրեն այնքան էլ լաւ չը պիտի զգար այդպիսի կծու քննադատութիւնից։

2) Ինչ վերաբերում է այն բանին, որ Ե. Թոփչեանը, «Մշակի» խօսքերով «իր խորին ադիտութիւնն է ցոյց տալիս այնպիսի լուսաւոր դէմքերի վերաբերմամբ, որպիսիքն են Մաքսիմ Կօվալևսկին, Միլիւկովը և առհասարակ ազատագրական առճիրանների վերաբերմամբ», դրան անհրաժեշտ ենք համարում պատասխանել, որ Ե. Թոփչեանը միմիայն յայտարարեց, որ ինչքան էլ Կօվալևսկին գեղեցիկ գոյներով նկարագրէ Դումայի բացումը, դրանից Ռուսաստանի ստրսաիելի իրականութիւնը չի փոխւի և ոչ էլ Դումայի քաղաքական նշանակութիւնը կը բարձրանայ։ Դա նշանակում է ոչ թէ ադէտ լինել, այլ համաձայն չը լինել պ. Կօվալևսկու կարծիքի հետ։ Իսկ վերջինիս կարծիքը պարտադիր է միայն կադէտի համար և ոչ թէ այն կուսակցութեան համար, որին պատկանում է Ե. Թոփչեանը։

Կարելի է խոնարհել Կօվալևսկու գիտական հեղինակութեան առաջ, բայց համաձայն չը լինել, դէմ լինել, թշնամի լինել նրա քաղաքական հայեացքներին։ Դա յայտնի է ամեն մի կրթւած մարդու, և ինքը պ. Առաքելեանը իր ադիտութիւնն է ցոյց տալիս այդ չը գիտենալով։

Իսկ Միլիւկովի վերաբերմամբ Ե. Թոփչեանը ոչինչ չէ ասել։

3) Մեր կողմից, այս անգամ, աւելորդ չենք համարում, զւարճացել մեր ընթերցողներին, «այն գոհար» մտքերով որոնցով լիքն էր պ. Առաքելեանի դասախօսութիւնը. թէ ըևօլիւցիան (յեղափոխութիւնը) էվօլիւցիայի (աստիճանական զարգացման) միջոցով պիտի լինի, թէ սօցիալ-դեմօկրատները իրենց զինւած գործողութիւններով նման են ոստիկանութեանը, որովհետև երկուսն էլ զէնք են գործ դնում, թէ Կովկասի համար հանրապետութիւնը անիրագործելի է, որովհետև ոչ հայը կուզենայ, որ նախագահը վրացի կամ Թուրք լինի և ոչ էլ միւսները կուզենան, որ հայ լինի, թէ կառավարչական ամենալաւ ձևը միապետական սահմանադրութիւնն է, մանաւանդ որ Նորվէգիայի նման մի երկիր էլ չուզեց ոչ հանրապետութիւն, ոչ կայսրութիւն (sic), այլ սահմանադրական թագաւորութիւն. թէ սօց.-դեմօկրատների և սօց.-յեղափոխականների ագրարային ծրագրում ոչ մի տարբերութիւն չը կայ, իսկ քաղաքական պահանջների մէջ խոշոր տարբերութիւններ կան և այլ այդ տեսակ կարծիքներ ու մտքեր, որոնք անհերքելի ապացոյցներ են պ. Առաքելեանի մտաւոր սնանկութեան ու ադիտութեան. որ և արժանի գնահատութիւն ստացաւ հասարակութեան կողմից։

Այս բոլորից յետոյ ընթերցողին ենք թողնում գնահատելու «Ալեզարդ կադէտ» պ. Առաքելեանի և նրա «նշանաւոր դասախօսութիւնը» այնպէս «անաչառութեամբ» պատկերացնող կադէտային «Մշակ» լրագրի վարմունքը։ Մ. Դ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Ենգէլի. մայիսի 2-ին

Այստեղ Քրիստափոր Միքայէլեանի մահւան տարեդարձի առիթով ապրիլի 7-ին հոգեհանգիստ կատարւեց, և մի խումբ երիտասարդներ, հանգուցեալի յիշատակը յարգելու համար, հանգանակութիւն բացին յօգուտ Կովկասի հայ աղէտեալների։ Գոյացած գումարը (292 ր. 88 կ.) և նւիրատուների ցուցակը ուղարկւում են խմբագրութեանդ։

Խորին յարգանքներով

Կ. Վարժապետեան

II

Սաչխէթի, մայիսի 1-ին

Խնդրեմ թոյլ տաք Ձեր լրագրի միջոցով յայտնելու շնորհակալութիւն պ. Ա. Մաղաթեանին, որը նւիրել է մեր չքաւոր դպրոցին 50 րուբլի։

Ի դիմաց հոգաբարձութեան՝

ուսուցիչ Մ. Սահաթեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետերբուրգի գործակալութիւնից)

մայիսի 6-ին

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պետական Դումայում ներքին գործերի մինիստրին արւելիք հարցումը այդ մինիստրութեան մի քանի պաշտօնեաների և ստոյգ զրպարտիչ հիմնարկութիւնների հակաօրինական գործողութիւնների մասին յետաձգւած է մինչև մայիսի 8-ի նիստը, որի ժամանակ քննւելու է այդ հարցապնդումը։

ՄԻՆՍԿ. Օրը ցերեկով քաղաքի կենտրօնում հինգ զինւած մարդիկ մտան Ցուկերմանի ծխախոտագործարանը և 300 ր. պահանջեցին անիշխանական կազմակերպութեան համար։ Մերժում ստանալով նրանք յարձակւեցին գործարանի կասսայի վրայ և խլեցին այն բոլոր փողերը, ինչ որ կային այնտեղ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ. Կազմակերպւեց մի մասնաժողով ժողովրդական համալսարան հիմնելու համար։

ԵԱՐՕՍԼԱՎ.—Պաշտօնական։—Լրագրներում հրատարակւած լուրերը հերքելու համար, հաղորդւում է, որ Ռիբինսկի մօտերում հաւաքւած էր բանւորների մի փոքրաթիւ խումբ, որը կօզակների և զինւորների մօտենալուն պէս, ցրւեց։ Ռիբինսկում և Եարօսլաւում մայիսի մէկը հանգիստ անցաւ։ Գործարանները, առևտրական տները, երկաթուղային արհեստանոցները—աշխատում էին։

ԲԵԼՕՍՏՕԿ.—17 հոգի, ատրճանակներով և դաշոյններով զինւորւած, յարձակւեցան Ռեժնովիցի Կաբոնդձ Դոմինիկովիչի բնակարանի վրայ և 4000 ր. պահանջեցին, սպառնալով, հակառակ դէպքում, ռումբ նետել նրա վրայ։ Երբ Կաբոնդձը հրաժարւեց տալ, այն ժամանակ չարագործները սկսեցին հրազէնները պարպել և վիրաւորեցին Կաբոնդձին։ Վերջինիս աղախինը կարողացաւ փախչել, մտնել զանգակատունը և սկսեց զանգահարել։ Կողոպտիչները փախան։

ՎԱՐՇԱՎԱ.—Արքունի գինետան գրասենեակը մտան երեք զինւած մարդիկ և ատրճանակներով սպառնալով, վերցրին բոլոր եղածը և փախան։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ.—Պաշտօնական։ — «Р. В.» 90 №-ում տպւած է, որ Վլադիվօստօկում բանտարկւած Մանջուրիական երկաթուղու մի քանի ծառայողները շղթայակապ են արւած, զրկւած են լոյսից, մաքուր օդից, գրքերից, առողջ կերակրից։ Այս բոլորը սուտ է. բանտարկեալները ոչ շղթայակապ են, ոչ լոյսից, գրօսանքից, կերակրից և ոչ էլ միմիանց հետ հաղորդակցելու հնարաւորութիւնից զրկւած չեն. իրենց ազգականների հետ միշտ տեսնւում են։ Վլադիվօստօկի ժամ. գեն.-նահանգապետ գեներալ-լէյտենանտ Անդրէև։

ՊԱՒԼՕԳՐԱԴ.—Վերադարձած զինւորները պահանջում են, որպէսզի իրենց ազատեն արքունական, զեմսկի, համայնական տուրքերից և վերադարձնեն իրենց այն տուրքերը, որոնք վերցրւած են իրենց ընտանիքներից այն ժամանակ, երբ իրենք զինւորական ծառայութեան մէջ էին գտնւում։

ԿՕՍՏՐՕՄԱ.—Կայացաւ մի բազմամարդ միտինգ, և վճռւեց հեռագիր ուղարկել Պետական Դումա խոստանալով աջակցութիւն և խնդրելով մինչև վերջը անխախտ պահանջել։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ.— «Южная Заря» լրագրում տպւած է մի բողոք Եկատերինօսլաւի պատգամաւոր պ. Սպասօբնու դէմ, որը Դումայում պաշտպան հանդիսացաւ մահւան պատժին։ Բողոքի տակ ստորագրել են 500 հոգի։

ԼՕՆԴՕՆ. «Daily Telegraf» լրագրի հաղորդելով Բրիտանական նաւատորմը յուլիս ամսին կայցելէ Կրօնշտադտ։

ՎԱՐՇԱՎԱ.—Երէկ Օրօզնայա փողոցի վրայ գտնւեց մի երիտասարդի դիակ։ Սպանւածի անձնաւորութիւնը մի քանի ժամ յետոյ պարզւեց. նա բանտից նոր ազատւած մի յեղափոխական էր Իգլիցօվսկին։

ՄՕՍԿՎԱ. Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց մայիսի 15-ին բաց անել 10 կենտրօնական նահանգների գործարանատէրերի և խոշոր առևտրականների համագումարը։—Կազմակերպւեց մի ընկերութիւն, որի նպատակն է հիմնել կանանց պօլիտեխնիքական գիտելիքների ուսումնարաններ։

ԵԱՐՕՍԼԱՎ. Բանտից ազատւեցան երեք քաղաքական բանտարկեալներ։

ԿՕՍՏՐՕՄԱ. Ազատւած են 4 քաղաքական բանտարկեալներ։

ԲԻՅՍԿ. Կադէտների նախընտրական ժողովներն արգելւած են։ Թոյլատրւեցան մի երկու անկուսակցական ժողովներ։ Օկտեաբրիստներն ազատ են գործում։ Հետաքրքրութիւնը դէպի ընտրութիւններն ուժեղանում է։—Գիւղերի ընտրողները (վիբօրշչիկ) հաւաքւում են Թեմիր-Խան-Շուրա։ Քաղաքում ընտրող ընտրւած է մի մուսուլման—սօցիալ-դեմօկրատ։

ՀԱԱԳԱ. Բոլորովին արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ 1907 թ. մայիսի վերջին կը հրաւիրւի երկրորդ խաղաղասիրական համաժողովը։

ՏՕԿԻՕ.—Ճապօնական կառավարչական շրջաններում քննւում է Կօրէայում Ճապօնիային վերաբերող դիպլօմատիական խնդիրների հարցը։ Ռուսաստանը չէ ուզում համաձայնել ճապօնական—կօրէական դաշնագրին, պնդելով, որ պրօտեկտօրատի խաղաղութիւնը վերահաստատեց Կօրէայի անկախութիւնը։ Լուրերին նայելով Անգլիան և Գերմանիան պաշտպանում են Ճապօնիայի պահանջները, իսկ Ֆրանսիան և Ամերիկան դեռ լուռ են։

Մայիսի 7

ԲԵԼՕՍՏՕԿ. Բանտից փախան երեք քաղաքական յանցաւորներ, որոնք կալանաւորւած էին ռումբեր պահելու պատճառով։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ.—Ուսումնարանական շրջանի հոգաբարձուն առաջինը Ռուսաստանում թոյլատրեց երկսեռ կրթութիւն ստանալը առևտրական դպրոցում։

ԳՐՕԴՆՕ.—Ցերեկով Ջամկօվայա փողոցում ռումբ նետեցին մի կօզակ օֆիցէրի վրայ։ Սպանութեան փորձը անյաջող անցաւ։ Ռումբ նետողը փախաւ։

ՍՕՍՆՕՎԻՑԻ.—Այստեղի եկեղեցում զինամթերքով պայթեցրին եկեղեցու դրամարկղը, որի մէջ փող չը կար։ Խլւած են անցագրերի բլանկները։ Չարագործները փախան։

ՄՕԳԻԼԵՕՎ. Բանտից ազատւած են 6 քաղաքական բանտարկեալներ, որոնք կալանաւորւած էին երկաթուղային գործադուլի համար։

ԿԱՆԳՈՒՐ.—Ազատւած են 16 քաղաքական բանտարկեալներ,

ԿԱԶԱՆ. Կրեստօվնիկօվների գործարանում մի բանւոր վիրաւորեց թաղային ոստիկանական վերահսկիչին։ Խփողը փախաւ։

—

Խմբագիր-հրատարակիչ՝

Բժ. ՏԻԳ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ 3—4 երեխաների համար

Հարկաւոր է գիմնազիստուհի մի հայուհի

տնային դաստիարակչուհու պաշտօնով, որ լաւ գիտենայ նաև հայերէն։ Պայմանն է ամսական 25 ր. ռոճիկ, ճաշ, բնակարան և ամեն յարմարութիւն։ Ցանկացողներին խնդրում եմ դիմել «Ալիք»-ի խմբագրութեան։

136 5—3

„ՀԱՅՐԵՆԻՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկա—տարեկան 150 դօլար

» վեց ամսեայ 75 »

Արտասահման—տարեկան 10 ֆրանկ

» վեց ամսեայ 6 »

Բաժանորդագինը կանխիկ

Հասցէ՝ The Haïrenik Publishing C° Beach St., Boston, Mass.

ՓՆՏՐՈՒՄ ԵՆ

մի հաւատարիմ հայ օրիորդ կամ տիկին ընտանիքի մէջ ապրելու և երեխաներին նայելու համար։ Դիմել իշխ. Թումանեանին։ (Барятинская, 6) (№ 82) 3—3

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԶԱՐԿ»

Տպագրւում է և շուտով լոյս կը տեսնեն

1) Աւստրիայի ճգնաժամը (լեզու և ազգ) Կ. Կաուցկու։

2) Գիւղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում—Ֆ. Էնգէլսի։

Թարգմանութիւն Գար. Պապօվեանի

163 4—5

Լոյս է տեսել մի նոր գիրք

«ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ»

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։

Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար, 77 երգեր շարժական խաղերով, 112 օրինակներ գրադմունքների համար։

Գինը 3 րուբլի։

10% յառկացւում է յօգուտ հայ աղքատների։ Թիֆլիս, Սօլօլակ, Պասկևիչի փողոց, № 13 (կ. 1. և.) (հ. և. 4 և.) 30—36

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7 պօդիեզդ նօտար Մելքովի։

Նոյնպէս պատաստում է ծաղիկը։

(Հ. ո. Կ.) 5—96

Նոր բացւած

Մօսկօվսկի գալանտերէյնի խանութում կարճ ժամանակով նշանակւած է

ԷԺԱՆԱՅՐԱԾ ՎԱՃԱՌՔ

Նոյն խանութում ծախւում են ճանապարհի անդրւկներ, կարդինկաներ և այլ ապրանքներ։ Միխայլօվսկի փող. Ալիբէգով № տ. № 7.

5—5

ԼԻՕ

Ս. ՄԵՍՐՈՊ

(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)։ 336 երես. գինը 75 կոպէկ։ Դիմել «Գուտտենբերգ» գրախանութ. Թիֆլիս։

(Հ.) 14—36

„Թիֆլիսի ալիւրի գործարանների ընկերութեան“

գրասենեակը, որը գտնւում է Ֆրէյլինսկի փողոց № 2 եղբայրք Փրիդոնեանների բանկային գրասենեակի դիմացը—սրանով յայտնում է ալիւր գնողներին, որ ալիւր վաճառելու բոլոր գործողութիւնները

Կենտրոնացած են Ընկերութեան այդ գրասենեակում։

97

Скоропечатня Ар. В Кутателадзе. Фрейлинск. ул., № 13